

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
18 փետրվարի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 սեպտեմբերի 2005 թվականի N 2388-Ն

ՄԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ
ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Վերնագիրը փոփ. 20.11.08 N 1407-Ն)

Հայաստանի Հանրապետությունում շահագործման մեջ գտնվող ավտոտրանսպորտային միջոցները, որպես շարժիչային վառելիք սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազ օգտագործելու համար գազաբալոնայինի վերասարքավորելու գործընթացի կանոնակարգման և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների շահագործման անվտանգության ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել՝

ա) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգը՝ համաձայն N 2 հավելվածի:

գ) բալոնների պարբերական վկայագրման ու գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկման աշխատանքներ կատարող կազմակերպությունների արտադրական

բազաներին և բանվորական ու ինժեներատեխնիկական անձնակազմերի գիտելիքներին ներկայացվող պահանջները՝ համաձայն N 3 հավելվածի:

(1-ին կետը լրաց, փոփ. 20.11.08 N 1407-Ն)

2. Սույն որոշման 1-ին կետի «ա» ենթակետն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 6 ամիս հետո:

3. Սույն որոշման 1-ին կետի «բ» ենթակետն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

4. Մինչև սույն որոշման 1-ին կետի «ա» ենթակետն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետությունում շահագործման մեջ գտնվող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոնային սարքավորումները և դրանց տեղակայումը պետք է համապատասխանեցվեն սույն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգի IV և V բաժիններում սահմանված տեխնիկական պահանջներին (բացառությամբ 30-րդ և 33-րդ կետերի) ու ենթարկվեն VIII բաժնում սահմանված փորձարկումներին՝ տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 օրացուցային տարվա ընթացքում:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2006 թ. փետրվարի 4
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2005 թվականի
սեպտեմբերի 28-ի N 2388-Ն որոշման

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

**ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ԲԱԼՈՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ՎԿԱՅԱԳՐՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՆԵՐ

1. Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) սահմանում է Հայաստանի Հանրապետությունում շահագործման մեջ գտնվող ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազավառելիքային սնման համակարգի փորձարկումների կատարման միասնական կարգը, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցներում որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազի բալոնների պարբերական վկայագրման ընդհանուր պահանջները:

2. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջները տարածվում են Հայաստանի Հանրապետությունում շահագործման մեջ գտնվող ավտոտրանսպորտային միջոցների, այդ թվում՝ ավտոբուսների (միկրոավտոբուսների), թեթև մարդատար, բեռնատար,

մասնագիտացված և հատուկ ավտոմոբիլների (այսուհետ՝ ավտոտրանսպորտային միջոցներ) վրա, որոնք հանձնվում են (ընդունվում են) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու նպատակով գազաբալոնային սարքավորումների տեղադրման համար, ինչպես նաև սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար դրանց վրա տեղադրվող գազաբալոնային սարքավորումների, գազաբալոնային սարքավորումների տեղադրում և գազավառելիքային սնման համակարգի փորձարկում իրականացնող, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազի բալոնների պարբերական վկայագրում ու գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկման աշխատանքներ կատարող կազմակերպությունների վրա:

3. Սույն տեխնիկական կանոնակարգը սահմանում է՝

1) բազային ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրում և գազավառելիքային սնման համակարգի փորձարկում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող ընդհանուր պահանջները.

2) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազի բալոնների պարբերական վկայագրում ու գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող ընդհանուր պահանջները.

3) գազաբալոնային սարքավորումների տեղադրման համար հանձնվող ավտոտրանսպորտային միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները.

4) ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրվող գազաբալոնային սարքավորումներին ներկայացվող տեխնիկական պահանջները.

5) ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրմանը ներկայացվող տեխնիկական պահանջները.

6) գազաբալոնային սարքավորումների տեղադրումից հետո ավտոտրանսպորտային միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները.

7) ավտոտրանսպորտային միջոցները գազաբալոնային սարքավորումների տեղադրման համար ընդունելու և տեղադրումից հետո պատվիրատուին հանձնելու ժամանակ հանձնման-ընդունման փաստաթղթերի ձևակերպման կարգը.

8) գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի փորձարկումների եղանակները և փորձարկումից հետո պատվիրատուին հանձնելու հանձնման-ընդունման փաստաթղթերի ձևակերպման կարգը.

9) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի փորձարկման մեթոդիկան.

10) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի աշխատունակության փորձարկման մեթոդիկան.

11) ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներում որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազի բալոնների

(այսուհետ՝ քալոն) պարբերական վկայագրման ընդհանուր պահանջները:

4. Սույն տեխնիկական կանոնակարգում օգտագործված են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) **գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոց**՝ ավտոտրանսպորտային միջոց, որում բացի հեղուկ նավթային վառելիքից (բենզին, դիզելային վառելիք) օգտագործվում է նաև սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազ.

2) **գազաբալոնային սարքավորումներ**՝ քալոնների և դրանց արմատուրայի (քալոնների խաչուկների, եռաբաշխիկների, փականների), միացնող խողովակների, գազատար խողովակամուղի և դրանց միացման հանգույցների, բարձր և ցածր ճնշման ռեղուկտորների, շարժիչի աշխատանքի կառավարման համակարգի, ստուգիչ-չափիչ և ապահովիչ սարքերի ամբողջությունը.

3) **գազաբալոնային սնման համակարգ**՝ գազաբալոնային սարքավորումների, վառոցքի կայծային համակարգի կամ սնման գազադիզելային համակարգի ամբողջությունը.

4) **գազի քալոնների պարբերական վկայագրում**՝ քալոնների պատրաստման և շահագործման տեխնիկական փաստաթղթերով սահմանված պարբերականությամբ և ծավալով իրականացվող տեխնիկական արատորոշում, որի արդյունքում սահմանվում է քալոնի օգտագործման ժամկետը՝ առանց լրացուցիչ արատորոշման:

II. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ, ԳԱԶԱՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ՄՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ ԵՎ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԻ ԲԱԼՈՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

5. Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրում կարող են կատարել միայն այն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ կազմակերպություն), որոնք ունեն՝

1) սույն տեխնիկական կանոնակարգի V, VI և VIII գլուխներում սահմանված պահանջների կատարումն ապահովող համապատասխան արտադրական բազա և անհրաժեշտ տեխնոլոգիական սարքավորումներ, այդ թվում՝ կոմպրեսորային սարքավորումներ.

2) այդ աշխատանքները կատարելու համար համապատասխան որակավորում ունեցող բանվորական և ինժեներատեխնիկական անձնակազմ:

6. Ավտոտրանսպորտային միջոցներում որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազի քալոնների պարբերական վկայագրում կարող են կատարել միայն այն կազմակերպությունները, որոնք ունեն՝

1) ՀՍ 279-2007, ՀՍ ԻՍՕ 6406 և ՀՍ ԻՍՕ 10464 ստանդարտներով և սույն տեխնիկական կանոնակարգի VIII գլխում սահմանված պահանջների կատարումն ապահովող համապատասխան արտադրական բազա և տեխնոլոգիական սարքավորումներ, այդ թվում՝ կոմպրեսորային սարքավորումներ.

2) այդ աշխատանքները կատարելու համար համապատասխան որակավորում

ունեցող բանվորական և ինժեներատեխնիկական անձնակազմ.

3) «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրված հավատարմագրման վկայագիր:

(6-րդ կետը լրաց 21.01.10 N 53- Ն)

III. ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆՎՈՂ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

7. Գազաբալոնային սարքավորումների տեղադրման համար ընդունվում են Հայաստանի Հանրապետությունում կամ այլ պետություններում արտադրված և Հայաստանի Հանրապետությունում շահագործման մեջ գտնվող ավտոտրանսպորտային միջոցները:

8. Գազաբալոնային սարքավորումների տեղադրման համար նախատեսված ավտոտրանսպորտային միջոցները պետք է գտնվեն տեխնիկապես սարքին վիճակում:

9. Գազաբալոնային սարքավորումների տեղադրման համար հանձնվող (ընդունվող) ավտոտրանսպորտային միջոցները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին`

1) ավտոտրանսպորտային միջոցների թափքը, դրա կրող հիմնակմախքը, ավտոբուսի կտուրը և կանգնակները չպետք է ունենան ճաքեր, մեխանիկական վնասվածքներ, միջանցիկ քայքայումներ (կոռոզիաներ), հատկապես բալոնների և գազաբալոնային սարքավորումների հետագա ամրացման տեղերում.

2) բալոնների և այլ հանգույցների ամրացման տեղերում նորոգման ներգործություններ (լրացուցիչ եռակցման կարեր, հարթությունների տարբեր մակարդակներ) չի թույլատրվում:

10. Բենզինային շարժիչով ավտոտրանսպորտային միջոցների կայծային վառոցքի համակարգը պետք է լինի տեխնիկապես սարքին վիճակում:

11. Դիզելային շարժիչով ավտոտրանսպորտային միջոցների մոտ բարձր ճնշման վառելիքի պոմպը պետք է ունենա շարժիչի ծնկավոր լիսեռի պտտման հաճախականության երկրեժիմային կարգավորիչ:

12. Բարձր ճնշման վառելիքի պոմպերը պետք է ստուգվեն և անհրաժեշտության դեպքում կարգավորվեն համապատասխան ստենդի վրա:

13. Դիզելային շարժիչով ավտոտրանսպորտային միջոցների մոտ պետք է ստուգվեն բոցամուղերի փակիչ կոնի հերմետիկությունը, ասեղի բարձրացման սկզբի ճնշման մեծությունը, փոշիացման որակը: Անհրաժեշտության դեպքում դրանք պետք է նորոգվեն կամ փոխարինվեն նորերով:

14. Բարձր ճնշման վառելիքի պոմպերի, ինչպես նաև բոցամուղերի փակիչ կոնի հերմետիկության, ասեղի բարձրացման սկզբի ճնշման մեծության, փոշիացման որակի ստուգման և կարգավորման արդյունքները պետք է նշված լինեն ակտում և ցուցմունքների գրանցված թվային արժեքները պետք է համապատասխանեն արտադրող կազմակերպության կողմից սահմանված նորմերին:

15. Ակտը պետք է ստորագրվի տեխնիկական ծառայության կողմից և վավերացվի ավտոտրանսպորտային միջոցը վերասարքավորման հանձնող կազմակերպության

ղեկավարի (սեփականատիրոջ) կողմից:

16. Գազաբալունային սարքավորումների տեղադրման համար հանձնվող ավտոտրանսպորտային միջոցները պետք է ունենան վառելիքի բաքում պահուստային վառելիքի քանակություն, ոչ պակաս՝

1) թեթև մարդատար ավտոմոբիլները և միկրոավտոբուսները՝ 5 լ.

2) մինչև 10 տ լրիվ զանգվածով բեռնատար, մասնագիտացված և հատուկ ավտոմոբիլները՝ 10 լ.

3) ավտոբուսները և 10 տ գերազանցող լրիվ զանգվածով բեռնատար, մասնագիտացված և հատուկ ավտոմոբիլները՝ 15 լ:

17. Գազաբալունային սարքավորումների տեղադրման համար ընդունված ավտոտրանսպորտային միջոցները պետք է լինեն մաքուր: Հատկապես մանրակրկիտ պետք է մաքրված լինեն գազաբալունային սարքավորումների ամրացման տեղերը (ավտոբուսի թափքը, շարժիչային և ուղեբեռային հատվածամասերը, ավտոմոբիլի շրջանակը, թափքի հատակը):

18. Գազաբալունային սարքավորումների տեղադրման համար հանձնվող ավտոտրանսպորտային միջոցների շարժիչների սնման համակարգերը պետք է կարգավորված լինեն ըստ արտանետվող գազերում թունավոր բաղադրիչների պարունակության ցուցանիշների և համապատասխանեցվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

19. Թեթև մարդատար ավտոմոբիլները և ֆուրգոն թափքով բեռնատարները (բալունները թափքի ներսում տեղադրելու դեպքում) գազաբալունային սարքավորումների տեղադրման համար ընդունվում են անկախ դրանց թափքի տեսակից՝ այն պայմանով, որ գազի հնարավոր արտահոսքի դեպքում կապահովվի բալունների տեղադրման գոտիներից դրա երաշխավորված հեռացումը՝ գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցի սահմաններից դուրս:

20. Ավտոբուսները գազաբալունային սարքավորումների տեղադրման համար ընդունվում են, եթե դրանք ունեն արտադրող կազմակերպության կողմից սեղմված բնական գազով աշխատելու համար նախատեսված գազաբալունայինի վերափոխված տարբերակ կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպության կողմից մշակված տեխնիկական փաստաթղթերին համապատասխան գազաբալունայինի վերափոխված և սահմանված կարգով փորձարկում անցած ու ընդունված փորձնական նմուշ:

21. Բեռնատար, մասնագիտացված և հատուկ ավտոմոբիլները, որոնք ունեն փայտյա հարթակ կամ ֆուրգոն, չպետք է ունենան լայնակի և երկայնակի զուգափայտերի, հատակի տախտակների վնասվածքներ: Մետաղական հարթակները կամ ֆուրգոնները գազաբալունային սարքավորումների ամրացման գոտիներում չպետք է ունենան մեխանիկական վնասվածքներ:

22. Գազաբալունային սարքավորումների ամրացման տեղերում ավտոտրանսպորտային միջոցների շրջանակները չպետք է ունենան ճաքեր, գամային միացումներում թուլացումներ և մեխանիկական վնասվածքներ:

IV. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԱԴՐՎՈՂ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

23. Ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրվող գազաբալոնային սարքավորումները պետք է ունենան իրենց բնութագրերը նկարագրող փաստաթղթերը:

24. Սեղմված բնական գազով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոնային սարքավորումների կազմում գտնվող բալոնները պետք է համապատասխանեն ՀՍՏ 279-2007 «Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներում տեղակայվող և որպես շարժիչային վառելիք սեղմված բնական գազի բարձր ճնշման բալոններ» ստանդարտի պահանջներին:

25. Շահագործվող բալոնները պետք է ենթարկվեն պարբերական վկայագրման ՀՍՏ 279-2007, ՀՍՏ ԻՍՕ 6406 և ՀՍՏ ԻՍՕ 10464 ստանդարտներով սահմանված կարգով:

(25-րդ կետը լրաց 21.01.10 N 53-Ն)

25.1. Այն բալոնները, որոնց արտադրության կամ վկայագրման ամսաթվից հետո անցել է դրանց վկայագրման ժամանակահատվածին հավասար կամ ավելի ժամանակ, մինչև ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրելը, պետք է վկայագրվեն սույն կանոնակարգի 6-րդ կետում նշված կազմակերպություններից որևիցե մեկում:

(25.1 կետը լրաց 21.01.10 N 53-Ն)

26. Ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրված յուրաքանչյուր բալոնը կամ դրանց խումբը (բլոկը), անկախ խմբում բալոնների քանակից, պետք է ունենա փակիչ փական, որն անհրաժեշտության դեպքում, այդ թվում՝ նաև դրանց տեխնիկական սպասարկումների, նորոգումների կամ փակ շինությունում պահման ժամանակ կապահովի դրա անջատումը գազավառելիքային սնման համակարգից:

27. Գազաբալոնները պետք է համալրված լինեն հրդեհի առաջացման ժամանակ ճնշումն իջեցնող ապահովիչ սարքվածքով: Շահագործման մեջ գտնվող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրված բալոնների համալրումն ապահովիչ սարքվածքով իրականացվում է բալոնների պարբերական վկայագրում իրականացնող կազմակերպության կողմից:

28. Գազաբալոնային սարքավորումների կառուցվածքը պետք է ապահովի դրանց արատորոշման, տեխնիկական սպասարկման և կարգավորման նպատակով հսկիչ-արատորոշիչ սարքավորումների առանձին հարմարանքներին միացնելու, ինչպես նաև գազաբալոնային սարքավորումների ազդեցատներին և հանգույցներին գազի կամ օդի կողմնակի աղբյուրի միացման հնարավորությունը:

29. Փականների (բալոնի կամ մայրուղու) կառուցվածքը պետք է ապահովի դրանց հերմետիկությունը փականի բոլոր դիրքերում և չպետք է թույլ տա դրա ինքնակամ տեղաշարժն ավտոտրանսպորտային միջոցների մոտ առաջացող ցանկացած թրթռումային (վիբրացիայի) ազդեցության դեպքում:

30. Ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրվող գազաբալոնային սարքավորումներն իրենց պարամետրերով պետք է ապահովեն շարժիչի լիարժեք աշխատանքը պարապ ընթացքի և բեռնվածության ռեժիմների բոլոր տիրույթներում:

31. Ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոնային սարքավորումների բոլոր տիպերի և մոդելների համար սեղմված բնական գազով բալոնները լիցքավորող հարմարանքը պետք է ունենա պաշտպանիչ թասակ՝ դրա կեղտոտումը կանխելու, ինչպես նաև հարմարանք՝ լիցքավորման փողրակի անջատման ժամանակ բալոնից գազի արտահոսքը կանխելու համար:

32. Գազաբալոնային սարքավորումները պետք է ունենան փակիչ-ապահովիչ հարմարանքներ, որոնք կապահովեն գազի մատուցման ավտոմատ անջատումը շարժիչի հանկարծակի կանգնելու դեպքում, այդ թվում՝ վառոցքի համակարգը միացված վիճակում մնալու դեպքում:

33. Մետաղական գազամուղերը պետք է պատրաստված լինեն պողպատյա կամ պղնձյա անկար խողովակներից: Անկար պղնձյա խողովակների օգտագործման դեպքում գազամուղերը պետք է ունենան ռետինե կամ պլաստմասսայե հյուսապատում (պահպանիչ շրջահյուսվածք):

34. Բարձր ճնշման պողպատե խողովակների արտաքին մակերեսը պետք է պատված լինի կարմիր գույնի լաքաներկի շերտով և կայուն լինի շրջակա միջավայրի և վառելիքաքսուքային նյութերի ներգործությունից:

35. Բարձր ճնշման գազամուղերի միացությունները պետք է ունենան կոմպենսացիոն գալարներ՝ գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների շարժման և մանևրների, ինչպես նաև շրջանակի, բեռնահարթակի կամ թափքի շեղվածքների ժամանակ դրանց ճկունություն տալու համար:

36. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոնային սարքավորումները, որոնք հնարավորություն են տալիս շահագործել ինչպես գազով, այնպես էլ նավթային վառելիքով, պետք է իրենց մեջ ներառեն տարբեր տեսակի վառելիքով աշխատելու փոխարկիչ կամ ավտոմատ բլոկավորող համակարգ, որը կբացառի երկու տեսակի վառելիքների (գազ և նավթային) միաժամանակյա՝ 5 վ-ից ավելի, տևական մատուցումը:

37. Մեկ տեսակի վառելիքից մյուսին փոխարկման ժամանակ թույլատրվում է դրանց միաժամանակյա կարճատև մատուցումը: Շարժիչի աշխատանքը մի տեսակի վառելիքից մյուսին փոխարկումը պետք է կատարվի վարորդի աշխատանքային տեղից՝ չմարելով շարժիչը:

38. Գազաբալոնային սարքավորումների կառուցվածքը պետք է ապահովի ավտոտրանսպորտային միջոցի հուսալի գործարկումը գազով՝ 5°C-ից բարձր շրջակա օդի ջերմաստիճանի դեպքում: 5°C-ից ցածր շրջակա միջավայրի ջերմաստիճանի դեպքում գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների շարժիչների գործարկումը կարող է իրականացվել նավթային վառելիքով (բենզին կամ դիզելային):

V. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

39. Ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների բոլոր ագրեգատների ու հանգույցների տեղադրումը պետք է կատարվի գազաբալոնային սարքավորման լրակազմ արտադրող կազմակերպությունների կողմից մշակված և ավտոտրանսպորտային միջոցներն արտադրող կազմակերպության կամ դրա համար լիազորած մարմնի հետ համաձայնեցված նորմատիվ և տեխնիկական փաստաթղթերի, կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպությունների կողմից մշակված և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի

Հանրապետության ոստիկանության հետ՝ նրանց կողմից սահմանվող կարգով համաձայնեցված տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

40. Ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրում կատարող կազմակերպություններում աշխատանքներն իրականացվում են միայն տեխնիկական փաստաթղթերը մշակող կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կողմից հաշվառված տեխնիկական փաստաթղթերի հիման վրա:

41. Բալոնների ամրացման ձևը և դրանց դասավորվածությունն ավտոտրանսպորտային միջոցների վրա պետք է իրականացվի բալոններ արտադրող կազմակերպությունների հրահանգով և գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեխնիկական փաստաթղթերով նախատեսված պահանջներին համապատասխան: Մասնավորապես, չի թույլատրվում՝

- 1) բալոնների ամրացումը պողպատյա ճոպանով.
- 2) օգտագործել ամրացնող մանրակների եռակցում բալոնի իրանին:

42. Արգելվում է ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրել այնպիսի բալոններ, որոնք՝

1) չունեն տեխնիկական տեղեկաթերթիկ կամ անընթեռնելի են տեխնիկական տեղեկաթերթիկի տվյալները.

2) անցել է սույն տեխնիկական կանոնակարգի 132-րդ կետում նշված ստանդարտներով սահմանված պարբերական զննման ժամկետը.

3) ունեն փակիչ և ապահովիչ սարքավորումների անսարքություններ.

4) ունեն իրանի վնասվածքներ (ճաքեր, ներս ընկած փոսեր, ակոսներ, քայքայումներ (կոռոզիա), ձևախախտումներ).

5) ներկը և գրառումները չեն համապատասխանում տեխնիկական տեղեկաթերթիկի տվյալներին:

43. Մեղմված բնական գազի համար լեզհրացված պողպատից կամ մետաղաթելքային բաղադրանյութերից պատրաստված բալոններն ավտոբուսների կտուրի վրա պետք է տեղադրվեն հատուկ հենասարքերում և հուսալի կերպով ամրացված լինեն: Արգելվում է ավտոբուսի վրա տեղադրել ածխաջրածնային պողպատից պատրաստված բալոններ:

44. Ավտոբուսների վրա բալոնները տեղադրելուց հետո պետք է ստուգվի դրանց ամրացման հուսալիությունը:

45. Գազաբալոնների ամրացումը պետք է բացառի ավտոբուսների կտրուկ արգելակումից (արագացումից) կամ կտրուկ շրջադարձերից հետո բալոնների տեղաշարժը կամ ամրացման հանգույցներում մնացորդային դեֆորմացիայի ի հայտ գալը:

46. Արևի ուղիղ ճառագայթումից, ձյան և անձրևի տեղումներից ավտոբուսի կտուրի վրա տեղադրված բալոնները պետք է պաշտպանված լինեն պատյանով, որը միաժամանակ կարող է ծառայել նաև որպես օդի շրջահոսիչ: Պատյանի կոնստրուկցիան պետք է ապահովի հասանելիություն դեպի բալոնների վրայի փականները՝ դրանց հերմետիկությունը ստուգելու համար:

47. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վրա լիցքավորման սարքը պետք է տեղակայվի այնպես, որ այն դուրս չգա գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների թափքի սահմաններից, իսկ որևէ այլ կերպ

տեղադրման դեպքում պետք է նախատեսվի լիցքավորող սարքի համարժեք պահպանումը վնասվածքներից:

48. Ավտոբուսի կտուրի վրա տեղադրված բալոնները շարժիչային հատվածամասում գտնվող գազային սարքերի հետ միացնող գազատար խողովակամուղը՝ ըստ կոնստրուկցիայի, պետք է լինի ամբողջական, այսինքն ամբողջ երկարությամբ չունենա միացնող կցորդիչներ, բացի ագրեգատների ու հանգույցների հետ միացնողներից և տեղավորված լինի դրսից օդափոխվող պատյանում:

49. Գազաբալոնների մետաղական մասը պետք է դրսից ներկված լինի արտադրող կազմակերպության կողմից նախատեսված համապատասխան ներկով, որը պետք է դիմակայի վառելիքաքսուքային նյութերի և մթնոլորտի ազդեցությանը:

50. Գազատար խողովակների միացումն անցումային կցիչներին, փականներին և գազաբալոնային սարքավորումների այլ տարրերին պետք է կատարվի անմիջադիրային ներագույցային և այլ միացումների օգնությամբ, որոնք հաճախակի մոնտաժման և ապամոնտաժման դեպքում ապահովում են միացության հերմետիկությունը:

51. Արգելվում է գազատար խողովակների եռակցումը:

52. Ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրված գազաբալոնային սարքավորումը պետք է ապահովի ներքին և արտաքին հերմետիկություն՝ տվյալ տեսակի օգտագործվող սարքավորման համար նախատեսված աշխատանքային ճնշման դեպքում:

53. Սեղմված բնական գազով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոնային սարքավորման փականապաշտպանական արմատուրան (ծախսային, մայրուղային, լցավորման փականները) պետք է ապահովի ներքին և արտաքին հերմետիկություն՝ 19,6 ՄՊա (200 կգ/սմ²) ճնշման դեպքում:

VI. ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

54. Ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրումից հետո պետք է փորձարկվեն դրանց գազավառելիքային սնման համակարգի ագրեգատների և հանգույցների միացումների հերմետիկությունն ու ամրությունը սույն տեխնիկական կանոնակարգի VIII գլխի պահանջների և IX գլխում նախատեսված մեթոդիկայի համաձայն՝ սեղմված բնական գազի համար՝ մինչև 19,6 ՄՊա, հեղուկացված նավթային գազի համար՝ մինչև 1,6 ՄՊա ճնշման տակ:

55. Գազավառելիքային սնման համակարգերի ագրեգատների ու հանգույցների միացման ամրության և հերմետիկության փորձարկման դրական արդյունքների դեպքում պետք է կարգավորել շարժիչի աշխատանքը՝ գազով աշխատելու համար: Պետք է կարգավորվեն նաև շարժիչից արտանետվող գազերում թունավոր բաղադրիչների թույլատրելի մակարդակները՝ ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների:

VII. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՄԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ

**ԺԱՄԱՆԱԿ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐԸ**

56. Գազաբալունային սարքավորումների տեղադրման համար ավտոտրանսպորտային միջոցների հանձնման ժամանակ կազմվում է հանձնման-ընդունման ակտ՝ համաձայն N 1 ձևի:

57. Հանձնման-ընդունման ակտն ստորագրվում է պատվիրատու կազմակերպության ներկայացուցչի (քաղաքացու) և ավտոտրանսպորտային միջոցի վրա գազաբալունային սարքավորումներ տեղադրող կազմակերպության ղեկավարի կողմից և վավերացվում վերջինիս կնիքով: Դիզելային շարժիչով ավտոտրանսպորտային միջոցի համար հանձնման-ընդունման ակտին պետք է կցված լինի սույն տեխնիկական կանոնակարգի 12-15-րդ կետերին համապատասխան բարձր ճնշման վառելիքի պոմպի և վառելիքային բոցամուղերի ստուգման ակտը:

58. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի անհամապատասխանության դեպքում ավտոտրանսպորտային միջոցը գազաբալունային սարքավորումների տեղադրման չի ընդունվում, որի մասին հանձնման-ընդունման ակտում տրվում է համապատասխան հիմնավորում՝ նշելով մերժման պատճառները:

59. Հանձնման-ընդունման ակտը կազմվում է երկու օրինակից, որոնցից մեկը մնում է ավտոտրանսպորտային միջոցի վրա՝ գազաբալունային սարքավորումների տեղադրում կատարող կազմակերպությունում, իսկ երկրորդը տրվում է ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջը:

60. Ավտոտրանսպորտային միջոցի վրա գազաբալունային սարքավորումների տեղադրումից, գազավառելիքային սնման համակարգի հերմետիկության և գազաբալունային սարքավորումների միացությունների ամրության փորձարկումներից (այսուհետ՝ ճնշափորձարկում) ու կարգավորումից հետո գազաբալունային սարքավորումներ տեղադրող կազմակերպության կողմից ձևակերպվում է անվտանգության պահանջներին ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված գազաբալունային սարքավորման համապատասխանության մասին սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված վկայականը՝ համաձայն N 2 ձևի, և ավտոտրանսպորտային միջոցի հետ հանձնվում է սեփականատիրոջը:

**VIII. ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԳԱԶԱՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ՄՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ՓՈՐՁԱՐԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ**

61. Ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալունային սարքավորումների տեղադրումից հետո պետք է կատարվեն դրանց գազավառելիքային սնման համակարգի ճնշափորձարկում և գազավառելիքային սնման համակարգի աշխատունակության և արտածվող գազերում թունավոր նյութերի պարունակության ստուգումներ:

62. Գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգի ճնշափորձարկում պետք է կատարվի նաև բոլոր այն գազաբալունային

ավտոտրանսպորտային միջոցների`

1) որոնց մոտ սույն տեխնիկական կանոնակարգի 132-րդ կետում նշված պարբերական զննման ժամկետներն անցնելու պատճառով կատարվել է բալոնների հանում ու տեղադրում կամ էլ փոխարինում.

2) որոնք ենթարկվել են ճանապարհատրանսպորտային պատահարի և միացնող գազախողովակներում, փականածախսային և ապահովիչ սարքերում ու բալոններում խափանումներ ունենալու պատճառով առաջացել է դրանք հանելու և հետագայում տեղադրելու անհրաժեշտություն:

63. Սույն կանոնակարգի 62-րդ կետում նշված դեպքերում գազավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկումները կարող են կատարվել սույն տեխնիկական կանոնակարգի 5-րդ կամ 6-րդ կետի պահանջները բավարարող կազմակերպություններում:

64. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգի ճնշափորձարկումները կատարվում են սույն տեխնիկական կանոնակարգի IX, իսկ աշխատունակության ու շարժիչից արտանետվող գազերում թունավոր բաղադրիչների նորմաներին համապատասխանության ստուգումները` համապատասխանաբար X, XI և XII գլուխներում նախատեսված մեթոդիկաներով:

65. Գազաբալոնային սարքավորումների հանգույցների և ագրեգատների ներքին և արտաքին հերմետիկության ստուգումը, ինչպես նաև գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների փորձարկումը կատարվում է օձառաջրի լուծույթի միջոցով կամ հատուկ սարքերի` հոսաորոնիչների օգնությամբ:

66. Շահագործման մեջ գտնվող և սույն տեխնիկական կանոնակարգի 62-րդ կետի 1-ին կամ 2-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների ընդունումը գազավառելիքային սնման համակարգի ճնշափորձարկման պետք է իրականացվի պատվիրատուի մոտ` վկայականի (համաձայն NN 2 կամ 3 ձևերի) առկայության դեպքում: Գազավառելիքային սնման համակարգի ճնշափորձարկումներից հետո ձևակերպվում է սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված վկայական` համաձայն N 3 ձևի:

67. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոնային սարքավորումների կարգավորման աշխատանքները, դրանց սնման համակարգերը գազով և նավթային վառելիքով աշխատելու դեպքում կատարվում են գազաբալոնային սարքավորումներ արտադրող կազմակերպությունների շահագործման հրահանգների համաձայն:

IX. ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՍ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԳԱԶԱԲԱՆԱԿԱՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱԶԱՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ՄՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՃՆՇԱՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՄԵԹՈՂԻԿԱՆ

68. Ամբողջությամբ լրակազմված և մաքրված ավտոտրանսպորտային միջոցները տեղափոխել գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների փորձարկման տեղամաս և փորձարկում կատարելու համար տեղակայել բանվորական տեղում:

69. Կատարել ամբողջ գազաբալոնային սարքավորումների արտաքին զննում` հատուկ ուշադրություն դարձնելով խողովակաշարերի և ճկափողերի միացությունների

վրա:

70. Ստուգել լցավորման և ծախսային փականների, մայրուղային էլեկտրամագնիսական գազային կափույրի բացվելու և փակվելու հեշտությունը:

71. Փակել գազաբալոնների վրա տեղադրված լցավորման, մայրուղային և ծախսային փականները:

72. Նախապատրաստել սեղմված օդի մատուցման կետն աշխատանքի համար:

73. Բացել լցավորման փականի կարճախողովակի խցափակիչը (թասակը):

74. Սեղմված օդի մատուցման ճկափողը միացնել գազավառելիքային սնման համակարգի լցավորման փականին:

75. Բացել գազաբալոնների լցավորման ու ծախսային փականները և շարժիչի սնման համակարգն աստիճանաբար լցնել սեղմված օդով մինչև համակարգում ճնշումը 1,0-ից մինչև 1,2 ՄՊա (10-ից մինչև 12 կգ/սմ²) հասնելը՝ սեղմված բնական գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների համար, 1,6 ՄՊա (16 կգ/սմ²) հասնելը՝ հեղուկ նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների համար:

76. Դադարեցնել սեղմված օդի մատուցումը և 2-3 րոպե հետո օճառաջրով ստուգել՝

1) լցավորման փականի բոլոր միացությունները.

2) բալոնների ծախսային փականների միացությունները.

3) բալոնների վրա տեղադրված խաչուկների, կցման հարմարանքների, անկյունակապերի, ճնշաչափի (մանոմետր) միացությունները.

4) խողովակաշարի միացությունները:

77. Հոսակորստի բացահայտման դեպքում բացել օդի արտանետման փականը և, օդը դուրս թողնելով, ճնշումը համակարգում հասցնել մինչև զրո:

78. Պարուրակային միացությունները ձգելու կամ կիպարարի փոխման միջոցով վերացնել անհերմետիկությունը:

79. Կրկնել գազաբալոնային սարքավորումների հերմետիկության ստուգումը սույն տեխնիկական կանոնակարգի 75-րդ և 76-րդ կետերի պահանջների համաձայն:

80. Վարորդի խցիկում վահանակի վրա վառելիքի տեսակի փոխարկիչը տեղափոխել «ԳԱԶ» դիրքի վրա և միացնել շարժիչի վառոցքի համակարգը:

81. Սեղմված բնական գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների մոտ բացել բալոնների լցավորման ու ծախսային փականները, և շարժիչի սնման համակարգն աստիճանաբար լցնել սեղմված օդով՝ մինչև համակարգում ճնշումը 1,0 ՄՊա (10 կգ/սմ²) հասնելը:

82. Հեղուկ նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների մոտ բացել բալոնների լցավորման փականը, և բալոնները լցնել օդով: 1,6 ՄՊա-ից (16 կգ/սմ²) ցածր ճնշման դեպքում ապահովիչ կափույրի գործարկման ժամանակ անհրաժեշտ է կատարել կափույրի կարգավորում՝ նախապես բալոններում ճնշումն իջեցնելով, այնուհետև բալոնները կրկին լցնել օդով՝ ճնշումը հասցնելով 1,6 ՄՊա-ի (16 կգ/սմ²), բացել ծախսային փականը:

83. Դադարեցնել սեղմված օդի մատուցումը և 2-3 րոպե հետո օճառաջրով (կամ հոսաորոնիչի օգնությամբ) ստուգել փակ և բաց դիրքերում մայրուղային փականի, բարձր ճնշման ռեդուկտորի (սեղմված բնական գազով աշխատող գազաբալոնային

ավտոտրանսպորտային միջոցների մոտ), էլեկտրամագնիսական փականի, ցածր ճնշման ռեդուկտորի և միացնող գազամուղերի ներքին և արտաքին հերմետիկությունը:

84. Ստուգել սնման նավթային համակարգի էլեկտրամագնիսական կափույրի աշխատանքը: Այդ նպատակով`

1) վառելիքի տեսակի փոխարկիչը տեղափոխել «ԲԵՆՁԻՆ» կամ «ԴԻԶԵԼԱՌԵԼԻՔ» դիրքի վրա.

2) միացնել վառոցքը և գործարկել շարժիչը նավթային վառելիքով.

3) վառելիքի տեսակի փոխարկիչը տեղափոխել «0» միջին դիրքի վրա:

Կարճատև աշխատանքից հետո շարժիչը պետք է կանգ առնի:

85. Ստուգել ցածր ճնշման ռեդուկտորի աշխատանքը: Այդ նպատակով, այն բանից հետո, երբ շարժիչը կանգ կառնի, վառելիքի տեսակի փոխարկիչը տեղափոխել «ԳԱԶ» դիրքի վրա: Այդ դեպքում ցածր ճնշման ճնշաչափի սլաքը սեղմված բնական գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցի մոտ պետք է ցույց տա ճնշման առկայություն` մոտավորապես 0,2 ՄՊա (2 կգ/սմ²), իսկ հեղուկ նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցի մոտ` 0,12-ից մինչև 0,15 ՄՊա (1,2-ից մինչև 1,5 կգ/սմ²):

86. Անջատել վառոցքը:

87. Համոզվելով 1,0 ՄՊա ճնշման դեպքում ավտոտրանսպորտային միջոցի սնման գազային համակարգի հերմետիկության մեջ` ավելացնել կետում մատուցվող օդի ճնշումը և ավտոտրանսպորտային միջոցների համակարգում ճնշումը հասցնել կետի ստուգիչ ճնշաչափի ցուցիչով մինչև 2,5 ՄՊա (25 կգ/սմ²):

88. Դադարեցնել սեղմված օդի մատուցումը և ստուգել ավտոտրանսպորտային միջոցի բարձր ճնշման ճնշաչափի ցուցմունքի համապատասխանությունը կետի ստուգիչ ճնշաչափի ցուցմունքի հետ:

89. Կատարել համակարգի հերմետիկության ստուգում սույն տեխնիկական կանոնակարգի 75-րդ և 76-րդ կետերի պահանջների համաձայն:

90. Համոզվելով 2,5 ՄՊա ճնշման դեպքում ամբողջ գազավառելիքային սնման համակարգի հերմետիկության մեջ` կատարել գազաբալոնային սարքավորումների վերջնական ճնշափորձարկում: Այդ նպատակով սույն տեխնիկական կանոնակարգի 75-րդ կետում նշված կարգով ավտոտրանսպորտային միջոցների բալոններում ճնշումն աստիճանաբար բարձրացնել մինչև 4,9, 9,8, 19,6 ՄՊա (50, 100, 200 կգ/սմ²) մեծության` յուրաքանչյուր դեպքում ստուգելով ավտոտրանսպորտային միջոցների վրայի բարձր ճնշման ճնշաչափի ցուցմունքի համապատասխանությունը կետի ստուգիչ ճնշաչափի ցուցմունքի հետ: Յուրաքանչյուր անգամ օդի ճնշումն ավելացնելու դեպքում ստուգել միացությունների հերմետիկությունը սույն տեխնիկական կանոնակարգի 75-րդ և 76-րդ կետերի համաձայն:

91. 19,6 ՄՊա ճնշմամբ ճնշափորձարկման ավարտից հետո փակել լցավորման փականը:

92. Անջատել սեղմված օդի մատուցման ճկափողը լցավորման փականից:

93. Լցավորման փականի պարուրակային միացություններում օձառաջրով պատել էլքի անցքը:

94. Սեղմված բնական գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային

միջոցների գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների ճնշափորձարկման դեպքում կատարել հետևյալ գործողությունները՝

1) լցավորման փականին միացնել հատուկ օդատար հեռացնող սարքը: Դանդաղ բացել ավտոտրանսպորտային միջոցի լցավորման փականը, և գազավառելիքային սնման համակարգից բաց թողնել սեղմված օդը: Գազաբալունի վրայի ճնշաչափի ցուցմունքը պետք է իջնի մինչև զրո.

2) փակել ավտոտրանսպորտային միջոցի լցավորման փականը.

3) լցավորման փականից անջատել հեռացնող օդատարը:

95. Գազաբալունների վակուումացման նպատակով լցավորման փականին միացնել վակուում-պոմպի (վակուումային սարքի) ձկափողը, փակել մայրուղային փականը և կատարել բալուններից օդի պոմպահանում 0,01 ՄՊա (0,1 կգ/սմ²) ոչ պակաս ճնշմամբ, որից հետո փակել գազաբալունային փականները և լցավորման փականից անջատել ձկափողը:

96. Սեղմված բնական գազով աշխատող գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների բալունների վակուումացումը կարող է փոխարինվել գազալցման ճնշակային կայանում գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցները գազով առաջին անգամ լցավորման դեպքում բալունները բնական գազով փչահարելու միջոցով:

X. ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՍ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅՏՍԱՅԻՆ ՎԱՌՈՑՔՈՎ ԳԱԶԱՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ՄՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԵԹՈՂԻԿԱՆ

97. Գազալցավորման ճնշակային կայանում լցավորելուց հետո գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցները տեղակայել աշխատունակության ստուգման կետում և արգելակել ձեռքի արգելակով:

98. Շարժիչը գործարկել նավթային վառելիքով և աշխատեցնելով ծնկավոր լիսեռի միջին պտտման հաճախականությամբ տաքացնել 70° C-ից մինչև 80° C:

99. Վառելիքի տեսակի փոխարկիչը տեղափոխել «O» դիրքին և նավթային վառելիքը ծախսել մինչև շարժիչի լրիվ կանգ առնելը:

100. Վառելիքի տեսակի փոխարկիչը տեղափոխել «ԳԱԶ» դիրքին: Միացնել վառոցքը:

101. Շարժիչը գործարկել գազով՝ գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցի գազաբալունային սարքավորման շահագործման հրահանգի համաձայն:

102. Գազաբալունային սարքավորման շահագործման հրահանգին համապատասխան կատարել շարժիչի ծնկավոր լիսեռի նվազագույն կայուն պտտման հաճախականության կարգավորումը՝ արտադրող կազմակերպության կողմից նախատեսված 500-ից մինչև 700 պտույտ/րոպեում մեծությամբ:

103. Ստուգել շարժիչի աշխատանքը պարապ ընթացքի բոլոր ռեժիմներում, ծնկավոր լիսեռի նվազագույն պտուտաթվերից մինչև առավելագույն պտուտաթվերը, որի ժամանակ շարժիչի թափառքը պետք է կատարվի առանց «Անկումների» և «Փռշտոցների»:

104. Սնման գազավառելիքային և վառոցքի համակարգերում տարբեր

անսարքությունների հայտնաբերման դեպքում կատարել կարգավորում կամ անհրաժեշտ նորոգում՝ ապահովելով շարժիչի կայուն աշխատանքը գազով:

105. Վառելիքի տեսակի փոխարկիչը տեղափոխել «ԲԵՆՋԻՆ» դիրքին:

106. Միացնել շարժիչի վառոցքի համակարգը և շարժիչը գործարկել նավթային վառելիքով:

107. Թողնել որպեսզի շարժիչն աշխատի պարապ ընթացքի կայունացված ռեժիմում 10-15 րոպե:

108. Վառելիքի տեսակի փոխարկիչը տեղափոխելով միջին «Օ» դիրքին, դադարեցնել բենզինի հոսքը և համոզվել, որ որոշ ժամանակ անց (սնման համակարգում էլեկտրամագնիսական փականից հետո վառելիքի մնացորդը ծախսելուց հետո) շարժիչը դադարեցնում է աշխատանքը:

109. Կատարել շարժիչի գործարկումը գազով:

110. Թողնել որպեսզի շարժիչն աշխատի պարապ ընթացքի կայունացված ռեժիմում 10-15 րոպե:

111. Փակել սնման համակարգի ծախսային (մայրուղային) փականները և համոզվել, որ որոշ ժամանակ անց շարժիչը դադարեցնում է աշխատանքը:

112. Նորից բացել ծախսային (մայրուղային) փականները, շարժիչը գործարկել գազով և թողնել, որպեսզի այն աշխատի պարապ ընթացքի կայունացված ռեժիմում 5-6 րոպե:

113. Վառելիքի տեսակի փոխարկիչը տեղափոխել միջին «Օ» դիրքին, դադարեցնել գազի հոսքը և համոզվելով, որ որոշ ժամանակ անց շարժիչը կկանգնի՝ անջատել վառոցքի համակարգը:

114. Միացնել վառոցքի համակարգը և փորձել շարժիչը՝ մեկնարկիչը գործարկելու միջոցով: Այդ գործողությունը կրկնել 2-3 անգամ և համոզվել, որ այն դեպքում, երբ վառելիքի տեսակի փոխարկիչը գտնվում է միջին «Օ» դիրքում, շարժիչը չի գործարկվում:

XI. ՄԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՍ ՇԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱԶԱԴԻՉԵԼԱՅԻՆ ՄՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԵԹՈՂԻԿԱՆ

115. Գազալցավորման ճնշակային կայանում լցավորելուց հետո գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցները տեղակայել աշխատունակության ստուգման կետում և արգելակել ձեռքի արգելակով:

116. Շարժիչը գործարկել նավթային վառելիքով և աշխատեցնելով ծնկավոր լիսեռի միջին պտտման հաճախականությամբ տաքացնել 70°C-ից մինչև 80°C:

117. Վառելիքի տեսակի փոխարկիչը տեղափոխել «Օ» դիրքին, և նավթային վառելիքը ծախսել մինչև շարժիչի լրիվ կանգ առնելը:

118. Տեղափոխել շարժիչի աշխատանքի ռեժիմի փոխարկիչը «ԳԱԶ» դիրքին և ստուգել շարժիչի աշխատանքը գազադիզելային ռեժիմում՝ ծնկավոր լիսեռի 600-ից մինչև 2100 պտույտ/րոպե պտտման հաճախականության դեպքում:

119. Ստուգել վառելիքի բռնկման բաժնեչափի մեծությունը, այդ նպատակով անջատել բլոկավորման անջատիչի սեղմակները և դրանք միացնել միմյանց: Գործարկել շարժիչը և պարապ ընթացքի ժամանակ վառելիքի տեսակի փոխարկիչը դնել «ԳԱԶ»

դիրքին, մինչև վերջ սեղմել վառելիքի մատուցման կառավարման ոտնակը:

120. Շարժիչի ծնկավոր լիսեռի պտտման հաճախականությունը պետք է լինի 2100+50 պտույտ/րոպե: Մեծ շեղումների դեպքում անհրաժեշտ է բռնկման չափաբաժնի մեծությունը կարգավորել բարձր ճնշման վառելիքի պոմպի բռնկման չափաբաժնի հենման մեխանիզմի միջոցով:

121. Արտածման համակարգում առկա «պայթյունների» ժամանակ պետք է կարգավորել բարձր ճնշման վառելիքի պոմպի շարժաբեռը և գազի բաժնորոշիչը կամ վերացնել գազավառելիքային սնման համակարգի այլ անսարքություններ՝ արտադրող կազմակերպության շահագործման հրահանգի ցուցումներին համապատասխան:

122. Վառելիքի տեսակի փոխարկիչը տեղափոխել «ԴԻԶՎԱՌԵԼԻԲ» դիրքին և կատարել շարժիչի գործարկում դիզելային վառելիքով:

123. Ոտնակի դիրքի փոփոխման միջոցով, որը ղեկավարում է բարձր ճնշման վառելիքի պոմպի քանոնի փոփոխությունը, փոփոխել շարժիչի պտուտաթվերը պարապ ընթացքի ռեժիմում՝ նվազագույն պտուտաթվերից մինչև առավելագույն պտուտաթվերը: Գործողությունը կրկնել 2-3 անգամ:

124. Վառելիքի տեսակի փոխարկիչը տեղափոխել «ԳԱԶ» դիրքին, չթողնել շարժիչի կանգառը և համոզվել, որ պարապ ընթացքի նվազագույն պտուտաթվերի դեպքում բարձր ճնշման վառելիքի պոմպի քանոնի ոտնակի ազատ դիրքի ժամանակ շարժիչն աշխատում է կայուն:

125. Շարժիչի սնման համակարգում փակել սեղմված բնական գազի ծախսային (մայրուղային) փականը և համոզվել (կրկնելով այդ գործողությունը 3-4 անգամ), որ այդ դեպքում ոտքով ոտնակը սեղմելու ժամանակ բարձր ճնշման վառելիքի պոմպի քանոնի տեղաշարժերը շարժիչի պարապ ընթացքի պտուտաթվերը գործնականորեն չեն փոխում:

126. Բացել սեղմված բնական գազի ծախսային (մայրուղային) փականը և սեղմել բարձր ճնշման վառելիքի պոմպի քանոնի տեղաշարժի ոտնակը, համոզվել, որ շարժիչի պարապ ընթացքի պտուտաթվերը սահուն փոփոխվում են նվազագույնից մինչև առավելագույնը: Կրկնել այդ գործողությունը 2-3 անգամ:

XII. ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՍ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԾԱՐԺԻՉԻՑ ԱՐՏԱՆԵՏՎՈՂ ԳԱԶԵՐՈՒՄ ԹՈՒՆԱՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

127. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցները նավթային վառելիքով և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու ժամանակ շարժիչից արտանետվող գազերում թունավոր բաղադրիչների պարունակության ցուցանիշների ստուգումները պետք է իրականացվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 965-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների էկոլոգիական անվտանգության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան: Անհրաժեշտության դեպքում կատարել շարժիչի սնման համակարգի կարգավորման աշխատանքներ:

128. Ձևակերպել փորձարկումների արդյունքները և անվտանգության պահանջներին ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված գազաբալոնային սարքավորման համապատասխանության վկայագրման մասին վկայականը՝ համաձայն N 2 ձևի:

XIII. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ՈՐՊԵՍ ՇԱՐԺԻՉԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՍ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԻ ԲԱԼՈՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

129. Ավտոտրանսպորտային միջոցներում որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազի բալոնների պարբերական վկայագրման աշխատանքները պետք է կատարվեն ՀՍ 279-2007, ՀՍ ԻՍՕ 6406 և ՀՍ ԻՍՕ 10464 ստանդարտներին համապատասխան, որոնք իրենց մեջ ներառում են՝

- 1) բալոնի նույնականացում.
- 2) բալոնի ներքին և արտաքին մակերևույթների զննում.
- 3) բալոնի զանգվածի և տարողության ստուգում.
- 4) բալոնի հիդրավիլի փորձարկում (1-ին, 2-րդ և 3-րդ տիպի բալոնների համար).
- 5) բալոնի ակուստիկ-առաքման հսկողություն (4-րդ տիպի բալոնների համար):

130. Բալոնների պարբերական վկայագրման դրական արդյունքների դեպքում վկայագրող կազմակերպությունը հատուկ մատյանում գրառում է հետևյալ տվյալները՝

- 1) բալոն համարը.
- 2) բալոնի փորձարկման ամսաթիվը (օրը, ամիսը և տարեթիվը) և հաջորդ վկայագրման ամիսը և տարեթիվը.
- 3) բալոնի զանգվածը (կգ).
- 4) բալոնի տարողությունը (լ).
- 5) աշխատանքային ճնշումը, ՄՊա (կգ/սմ²).
- 6) փորձարկման ճնշումը, ՄՊա (կգ/սմ²).
- 7) բալոնի վկայագրման համար պատասխանատու անձի ստորագրությունը:

(129-րդ կետը լրաց 21.01.10 N 53- Ն)

131. Գրանցամատյանը պետք է համարակալվի, քուղակապվի, կնքվի փորձարկման կայանի կնիքով և պահվի կայանում:

132. Ավտոտրանսպորտային միջոցներում որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար սեղմված բնական գազի բալոնների պարբերական վկայագրումը կատարվում է՝ ՀՍ 279-2007 ստանդարտում սահմանված ժամկետներում՝

- 1) լեգիրացված պողպատից պատրաստված 1-ին տիպի բալոնները՝ յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամից ոչ պակաս.
- 2) ածխածնային պողպատից պատրաստված 1-ին տիպի բալոնները՝ յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամից ոչ պակաս.

3) 2-4 տիպի բալոնները՝ յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամից ոչ պակաս.

4) հեղուկացված նավթային գազի բալոնները՝ յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամից ոչ պակաս:

133. Պարբերական վկայագրման ժամկետանց բալոններով գազաբալոնային

ավտոտրանսպորտային միջոցների շահագործումը կանխելու նպատակով ավտոտրանսպորտային միջոցի դիմապակու վերևի աջ անկյունում ներսի կողմից փակցվում է ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված բալոնների հաջորդ վկայագրման ժամկետը (տարեթիվը և ամիսը) նշող 50 մմ x 80 մմ չափսերով կտրոն՝ համաձայն N 4 ձևի՝

1) գազաբալոնային սարքավորումների տեղադրում իրականացնող կազմակերպությունների կողմից՝ սույն տեխնիկական կանոնակարգի 60-րդ կետում նշված աշխատանքները կատարելուց հետո.

2) բալոնների պարբերական վկայագրում իրականացնող կազմակերպությունների կողմից՝ սույն տեխնիկական կանոնակարգի 66-րդ կետում նշված աշխատանքները կատարելուց հետո.

3) այն դեպքերում, երբ նախկինում գազավառելիքային սնման համակարգով կահավորված ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրված բալոնների հաջորդ վկայագրման ժամկետը դեռևս չի լրացել, և առկա է սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված NN 2 կամ 3 ձևերի վկայականը՝ համապատասխանաբար այդ վկայականները տվող կազմակերպությունների կողմից՝ առանց դրանց գազավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկում կատարելու:

(133-րդ կետը լրաց 21.01.10 N 53- Ն)

134. Կտրոնի դիմային կողմի կենտրոնում տպագրական եղանակով նշվում է բալոնի (բալոնների) հաջորդ վկայագրման տարեթիվը՝ 20մմ բարձրությամբ և 10մմ լայնությամբ արաբական թվերով: Տարվա ամիսները ցույց տվող թվերը 6մմ բարձրության արաբական թվերով տեղակայվում են կտրոնի շրջագծով: Բալոնի (բալոնների) հաջորդ վկայագրման ամիսը նշվում է կտրոնի շրջագծով տեղակայված համապատասխան թիվը դակիչով դակելու միջոցով:

135. Կտրոնը պետք է ունենա հատուկ դրոշմի միջոցով արված կտրվածքներ՝ ապակու վրա փակցնելուց հետո դրա ամբողջական պոկումը կանխելու նպատակով:

136. Կտրոնն ավտոտրանսպորտային միջոցի դիմապակու վրա կպցնելուց առաջ հակառակ կողմում լրացվում են դրանում նախատեսված տվյալները, ստորագրվում և կնքվում կազմակերպության ղեկավարի կողմից:

136.1. Ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված բալոնների հաջորդ վկայագրման ժամկետը նշող կտրոնների տպագրումն ու սույն կանոնակարգի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխանող կազմակերպություններին բաշխումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից ներկայացվող հայտերի հիման վրա՝ համաձայն N 5 ձևի: Կտրոնների տպագրման, հաշվառման, կազմակերպություններին բաշխման և կազմակերպություններում հաշվառման ու ավտոտրանսպորտային միջոցներին տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը:

(136.1 կետը լրաց 21.01.10 N 53- Ն, խմբ. 09.12.10 N 1614- Ն)

137. 2011 թվականի մարտի 1-ից հետո գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցի դիմապակու վրա տեղադրված բալոնների հաջորդ վկայագրման ժամկետը նշող կտրոնի բացակայության կամ ժամկետանց կտրոնի առկայության դեպքում արգելվում է

բալոնների լցավորումը գազով:

(137 կետը փոփ. 09.12.10 N 1614- Ն)

138. Մինչև սույն տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը գազաբալոնային սարքավորումներով կահավորված ավտոտրանսպորտային միջոցները՝ մինչև 2011 թվականի մարտի 1-ը պետք է վկայագրվեն բալոնների պարբերական վկայագրում կատարող կազմակերպություններից որևիցե մեկում:

(138 կետը փոփ. 09.12.10 N 1614- Ն)

139. Բալոնների պարբերական վկայագրում կատարող կազմակերպությունները նախկինում գազավառելիքային սնման համակարգով կահավորված ավտոտրանսպորտային միջոցների վկայագրումը կատարում են դրանց վրա տեղադրված գազաբալոնային սարքավորումների ամրակապման հուսալիության մեջ համոզվելուց և գազավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկում կատարելուց հետո:

140. Փորձարկումների դրական արդյունքի դեպքում կազմակերպության կողմից ձևակերպվում է ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված բալոնների վկայագրման և գազավառելիքային սնման համակարգի ճնշափորձարկման սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված վկայական՝ համաձայն N 3 ձևի, և ավտոտրանսպորտային միջոցի դիմապակու վերևի աջ անկյունում ներսի կողմից փակցվում է ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված բալոնների հաջորդ վկայագրման ժամկետը նշող կտրոնը:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

**Դ. Սարգսյան
Ձև N 1**

Ա Կ Տ N _____

**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎՐԱ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ
ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

Քաղ. _____ 200 թ.

1. Ավտոտրանսպորտային միջոցը հանձնող կազմակերպության (քաղաքացու)՝
անվանումը (անունը, ազգանունը) _____

գտնվելու (բնակության) վայրը _____

հեռախոսը, ֆաքսը _____ պետական գրանցման N _____

2. Գազաբալոնային սարքավորումներ տեղադրող կազմակերպության՝
անվանումը _____ գտնվելու վայրը _____

հեռախոսը, ֆաքսը _____ պետական գրանցման N _____

3. Ավտոտրանսպորտային միջոցի՝
մակնիշը _____ թողարկման տարեթիվը _____

հաշվառման համարանիշը _____ հենասարքը N _____

շարժիչի տիպը _____ N _____ թափքը _____

նույնականացման (VIN) համարը _____

4. Դիզելային շարժիչով ավտոմոբիլի՝
բարձր ճնշման վառելիքի պոմպի տեսակը _____
N _____

բարձր ճնշման վառելիքի պոմպի և վառելիքի բոցամուղների ստուգման ակտը _ էջ՝ 1
օրինակից

6. Տեխնիկական վիճակը՝
թափքի _____ հենասարքի _____
ավտոբուսի կտուրի _____

7. Ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրվելու է գազաբալոնային
սարքավորումներ՝
սեղմված բնական (հեղուկացված նավթային) գազով աշխատելու համար (որը ճիշտ է՝
ընդգծել)

8. Հատուկ նշումներ _____

9. Գազաբալոնային սարքավորումների տեղադրման վերաբերյալ կազմակերպության
որոշումը՝

(ընդունված է (չի ընդունված)

(էթե չի ընդունվում, պետք է նշել պատճառները)

*Ավտոտրանսպորտային միջոցի վրա
գազաբալոնային սարքավորումների տեղադրում
կատարող կազմակերպության ղեկավար*

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Կ.Տ.

*Պատվիրատու կազմակերպության
ներկայացուցիչ (քաղաքացի)*

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

(Ձևը խմբ. 20.11.08 N 1407-Ն)

Ձև N 2

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N _____

**ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎՐԱ
ՏԵՂԱԴՐՎԱԾ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՎԿԱՅԱԳՐՄԱՆ**

Քաղ. _____

_____ 20 թ.

1. Գազաբալոնային սարքավորումների տեղադրում կատարող կազմակերպության՝

անվանումը _____

գտնվելու վայրը _____

հեռախոսահամարը, ֆաքսը _____

պետական գրանցման համարը _____ ամսաթիվը _____ թ:

2. Ավտոտրանսպորտային միջոցի մակնիշը _____, թողարկման տարեթիվը _____, հաշվառման համարանիշը _____, հենասարքը N _____, թափքը N _____, շարժիչի տիպը _____ N _____, նույնականացման (VIN) համարը _____:

3. Ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված են գազաբալոնային սարքավորումներ՝ սեղմված բնական (հեղուկացված նավթային) գազով աշխատելու համար:

4. Ավտոտրանսպորտային միջոցը լրակազմված է _____

(արտադրող կազմակերպության (գործարանի) անվանումը)

կողմից _____ թվականին արտադրված և _____ 20 թ. N _____ հավատարմագրման վկայագրի հիման վրա գործող _____ կողմից վկայագրված

(բալոնները վկայագրող կազմակերպության անվանումը)

բալոններով, որոնց տվյալներն ամփոփված են աղյուսակում:

NN ը/կ	Բալոնի համարը	Հերթական վկայագրման ժամկետը	NN ը/կ	Բալոնի համարը	Հերթական վկայագրման ժամկետը
1.			5.		
2.			6.		
3.			7.		
4.			8.		

5. Գազաբալոնային սարքավորումները տեղադրված են _____

(վերասարքավորման փաստաթղթերը

կողմից մշակված

մշակող կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը)

վերասարքավորման կոնստրուկտորական և տեխնոլոգիական փաստաթղթերին համապատասխան:

6. Հեղուկացված նավթային գազով աշխատելու համար գազաբալոնային սարքավորումներով կահավորված ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգը փորձարկվել է 1,6 ՄՊա ճնշման տակ, և կատարվել է բալոնների վակուումացում (բալոնների՝ բնական գազով փչահարում):

7. Կատարվել է սեղմված բնական գազով աշխատելու համար գազաբալոնային սարքավորումներով կահավորված ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգի ճնշափորձարկում՝ հաջորդաբար 1,0, 2,5, 4,9, 9,8

և 19,6 ՄՊա ճնշման տակ և հերմետիկության ստուգում: Կատարվել է բալոնների վակուումացում (բալոնների` բնական գազով փչահարում):

8. Գազաբալոնային սարքավորման բալոնների, ազրեգատների և հանգույցների ամրացման հուսալիությունը համապատասխանում է տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

9. Կատարված է սնման գազավառելիքային համակարգի կարգավորում` սեղմված բնական գազով (հեղուկացված նավթային գազով) աշխատելու համար:

10. Արտանետվող գազերում թունավոր բաղադրիչների պարունակության ցուցանիշների ստուգումը կատարված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան և համապատասխանում է սահմանված պահանջներին:

11. Ավտոտրանսպորտային միջոցը համապատասխանում է սեղմված բնական գազով (հեղուկացված նավթային գազով) աշխատելու համար նախատեսված տեխնիկական պահանջներին:

Ավտոտրանսպորտային միջոցի վրա
գազաբալոնային սարքավորումների տեղադրում
կատարող կազմակերպության
ղեկավար _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(Ձևը խմբ. 20.11.08 N 1407-Ն, 21.01.10 N 53-Ն)

Ձև N 3

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N _____

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎՐԱ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԲԱԼՈՆՆԵՐԻ
ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ԵՎ ԳԱԶՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ՄՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՃՆՇԱՓՈՐՁԱՐԿՄԱՆ

Քաղ. _____ 20 թ.

1. Բալոնների պարբերական վկայագրում կատարող կազմակերպության`
անվանումը _____, գտնվելու վայրը _____,
հեռախոսահամարը, ֆաքսը _____, պետական գրանցման N _____,
հավատարմագրման վկայագրի համարը N _____, տալու ամսաթիվը _____,
գործողության ժամկետը _____:

2. Ավտոտրանսպորտային միջոցի մակնիշը _____, թողարկման տարեթիվը _____,
հաշվառման համարանիշը _____, հենասարքը N _____, թափքը N _____,
շարժիչի տիպը _____ N _____, նույնականացման (VIN) համարը _____:

3. Ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված են գազաբալոնային
սարքավորումներ` սեղմված բնական (հեղուկացված նավթային) գազով աշխատելու

համար:

4. Ավտոտրանսպորտային միջոցը լրակազմված է _____ 20 թ. վկայագրված բալոններով, որոնց տվյալներն ամփոփված են աղյուսակում:

NN ը/կ	Բալոնի համարը	Հերթական վկայագրման ժամկետը	NN ը/կ	Բալոնի համարը	Հերթական վկայագրման ժամկետը
1.			5.		
2.			6.		
3.			7.		
4.			8.		

5. Գազաբալոնային սարքավորումները տեղադրվել են _____
(տեղադրող կազմակերպության անվանումը)

կողմից և տրվել է _____ 20 թ. N _____ N 2 ձևի վկայականը:

6. Բալոնների նախորդ վկայագրումն իրականացվել է _____ 20 թ. _____
(վկայագրող

_____ կողմից և տրվել է _____ 20 թ. N _____ N 3 ձևի վկայականը:
կազմակերպության անվանումը)

7. Հեղուկացված նավթային գազով աշխատելու համար գազաբալոնային սարքավորումներով կահավորված ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգը փորձարկվել է 1,6 ՄՊա ճնշման տակ, և կատարվել է բալոնների վակուումացում (բալոնների՝ բնական գազով փչահարում):

8. Կատարվել է սեղմված բնական գազով աշխատելու համար գազաբալոնային սարքավորումներով կահավորված ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգի ճնշափորձարկում՝ հաջորդաբար 1,0, 2,5, 4,9, 9,8 և 19,6 ՄՊա ճնշման տակ և հերմետիկության ստուգում: Կատարվել է բալոնների վակուումացում (բալոնների՝ բնական գազով փչահարում):

9. Գազաբալոնային սարքավորման բալոնների, ագրեգատների և հանգույցների ամրացման հուսալիությունը համապատասխանում է տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

10. Ավտոտրանսպորտային միջոցը համապատասխանում է սեղմված բնական գազով (հեղուկացված նավթային գազով) աշխատելու համար նախատեսված տեխնիկական պահանջներին:

Ավտոտրանսպորտային միջոցի վրա
բալոնների պարբերական վկայագրում
կատարող կազմակերպության
ղեկավար _____

(ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

(Ձևը խմբ. 20.11.08 N 1407-Ն, 21.01.10 N 53-Ն)

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎՐԱ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԲԱԼՈՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՆՇՈՂ ԿՏՐՈՆԻ

Կտրոնի դիմային կողմը

Կտրոնի հակառակ կողմը

4	5	6	7	8	9
3					10
2	20---				11
1					12
N 000000					

N 000000

Վկայագրողի (տեղադրողի) անվանումը

Պետական գրանցման համարը _____
 գրանցվել է _____ 20 թ.
 Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման
 համարանիշը . _____
 Ձև N 2 (ձև N 3) վկայական N _____
 տրվել է _____ 20 թ.
 Վկայագրող (տեղադրող) _____
 կազմակերպության ղեկավար (ստորագրությունը)
 Կ.Տ.

(*Ձևը խմբ. 20.11.08 N 1407-Ն, 21.01.10 N 53-Ն*)

Ձև N 5

Հ Ա Յ Տ

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎՐԱ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԲԱԼՈՆՆԵՐԻ ՀԱՋՈՐԴ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՆՇՈՂ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՏՐԱՍԱԴՐՄԱՆ

_____ 20 թ.

1. Գազաբալոնային սարքավորումների տեղադրում (վկայագրում) կատարող կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ)՝

անվանումը _____

գտնվելու վայրը _____

հեռախոսահամարը, ֆաքսը _____

պետական գրանցման համարը _____, ամսաթիվը _____ թ.

գործունեության տեսակը _____:

(գազաբալոնային սարքավորումների տեղադրում (բալոնների պարբերական վկայագրում)

2. Արտադրական բազայի գտնվելու վայրը _____:

3. Արտադրական բազայի ընդհանուր մակերեսը՝ _____ քառ. մ, բարձրությունը՝ _____ մ:

4. Գազաբալոնային սարքավորումների տեղադրում կատարող կազմակերպության կողմից սարքավորումները տեղադրվում են

(վերասարքավորման փաստաթղթերը մշակող կազմակերպության

_____ կողմից մշակված վերասարքավորման

անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը)

կոնստրուկտորական և տեխնոլոգիական փաստաթղթերին համապատասխան (լրացնում է միայն տեղադրողը):

5. «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրված հավատարմագրման վկայագրի համարը _____, տալու ամսաթիվը _____ 20 թ. (լրացնում է միայն վկայագրողը):

Հայտնում եմ, որ նշված գործունեության իրականացման համար նախատեսված արտադրական բազան համալրված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող անձնակազմով և սարքավորումներով, այդ թվում՝ _____ մակնիշի, _____ թվականին, _____ գործարանի կողմից արտադրված կոմպրեսորային սարքավորումով, որը վկայագրված է _____ 20 թ., վկայական՝ N _____:

Խնդրում եմ տրամադրել _____ հատ
(կտրոնների քանակը՝ տառերով և արաբական թվերով)

ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված բալոնների հաջորդ վկայագրման ժամկետը նշող կտրոններ:

Հայտատու _____

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը, հայրանունը)

(*Ձևը խմբ. 20.11.08 N 1407-Ն, լրաց. 21.01.10 N 53-Ն*)

(*Հավելվածը խմբ. 20.11.08 N 1407-Ն, լրաց, խմբ. 21.01.10 N 53-Ն*)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2005 թվականի
սեպտեմբերի 28-ի N 2388-Ն որոշման

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

**ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգը (այսուհետ՝ հրահանգ) սահմանում է սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ու ընթացիկ նորոգման կազմակերպման, տեխնիկական սպասարկման ու ընթացիկ նորոգման արտադրական բազային ներկայացվող պահանջների և շահագործման ժամանակ անվտանգության տեխնիկայի

պահանջների հիմնական դրույթները:

2. Սույն հրահանգի դրույթները տարածվում են Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներ շահագործող բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձանց վրա:

II. ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄԸ

1. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման կազմակերպումը

1.1. Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման տեխնոլոգիական պրոցեսներն ունեն իրենց մի շարք ուրույն առանձնահատկությունները:

Այդ աշխատանքների ծավալն ու բովանդակությունը կախված է ավտոտրանսպորտային կազմակերպության կամ ավտոտրանսպորտային միջոցների սեփականատիրոջ (այսուհետ՝ կազմակերպություններ) գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների քանակից:

1.2. 3-ից ոչ ավելի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոց ունեցող կազմակերպություններում կարող են կազմակերպվել միայն ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և գազավառելիքային սնման համակարգի հանգույցների ու միացությունների հերմետիկության ստուգման հետ կապված ամենօրյա սպասարկման աշխատանքները:

Գազաբալոնային սարքավորումների տեխնիկական սպասարկման և նորոգման մնացած աշխատանքները տվյալ դեպքում կատարվում են մասնագիտացված կազմակերպություններում կամ գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման կայաններում:

1.3. Խոշոր ավտոտրանսպորտային կազմակերպությունների գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման կայանների տարածքում պետք է կազմակերպվեն՝

գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների հերմետիկության ստուգման կետ,

գազի բացթողման կետ՝ սեղմված բնական գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների համար և (կամ) դատարկման կետ՝ հեղուկացված նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների համար,

ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոնների գազազերծման կետ, գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման համար մասնագիտացված տեղամասեր, գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների պահման համար բաց

հարթակներ:

Բացի դրանից, շահագործական գոտում կարող է կազմակերպվել՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազից գազազերծված դատարկ գազաբալոնների պահման համար պահեստ (տեղամաս),

հարթակ՝ շարժական ավտոգազալցավորող միջոցի տեղաբաշխման համար,

հարթակ՝ ավտոմոբիլների գազալցման կոմպրեսորային կայանի տեղաբաշխման համար:

1.4. Կազմակերպության տարածք ավտոտրանսպորտային միջոցների մուտք գործելու ժամանակ վերահսկման-բացթողման կետում գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների հերմետիկության ստուգումը կատարվում է հոսաորոնիչի կամ միացություններն օձառաջրով օձառապատելով՝ տեսողության և լսողության միջոցով:

Եթե գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղակայված է գազի արտահոսքի ազդանշանային համակարգ, ապա այն ստուգվում է դրա շահագործման հրահանգի պահանջների համաձայն:

1.5. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների բոլոր հանգույցների ու ազրեգատների տեխնիկական սպասարկումն ու ընթացիկ նորոգումը, բացառությամբ գազավառելիքային սնման համակարգի, կատարվում է արտադրական մասնաշենքում՝ հեղուկ վառելիքով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների հետ միասին:

1.6. Գազաբալոնային սարքավորումների տեխնիկական սպասարկումն ու ընթացիկ նորոգումը կատարվում է մասնագիտացված տեղամասերում:

1.7. Կախված գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների և գազաբալոնային սարքավորումների տեխնիկական վիճակից, դրանց տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման տեխնոլոգիական պրոցեսները կարող են կազմակերպվել հետևյալ սխեմաներով՝

ա) երբ ավտոտրանսպորտային միջոցը և դրա գազաբալոնային սարքավորումները սարքին են.

Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցները ավտոտրանսպորտային կազմակերպություն վերադառնալու ժամանակ վերահսկման-բացթողման կետում տեխնիկական գնում անցնելուց հետո ուղարկվում են մասնագիտացված կետ՝ գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների հերմետիկությունն ստուգելու համար: Հերմետիկության ստուգման են ենթարկվում գազաբալոնների բկանցքի պարուրակները, փականաապահովչային արմատուրը և այլն:

Սեղմված բնական գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոնային սարքավորումների հերմետիկության ստուգման դեպքում ճնշումը գազաբալոններում պետք է լինի 2,0 ՄՊա-ից (20 կգ/սմ²) ոչ պակաս, ինչը որոշվում է գազավառելիքային սնման համակարգի ճնշաչափի ցուցմունքով:

Անսարքության բացակայության և գազավառելիքային սնման համակարգի հերմետիկության առկայության դեպքում ավտոտրանսպորտային միջոցն ուղարկվում է լվացման, այնուհետև անհրաժեշտության դեպքում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով լցավորման, և կայանատեղ, որտեղ փակում են ծախսային փականը և թողնում, որպեսզի շարժիչն աշխատի մինչև գազամուղում գազն սպառվելուց հետո

ինքնակամ կանգնելը.

բ) պլանային տեխնիկական սպասարկման ժամանակ.

Պլանային տեխնիկական սպասարկում անցկացնելու դեպքում գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցները գծից վերադառնալուց հետո ուղարկվում են գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների հերմետիկության ստուգման կետ: Գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների հերմետիկության առկայության դեպքում գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներն ուղարկվում են լվացման և, պլանային տեխնիկական ներգործության տեսակից, կախված տեխնիկական սպասարկման համապատասխան գոտի:

Ընդհանուր արտադրական մասնաշենքում կանոնակարգային աշխատանքներ կատարելուց հետո գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցները մտնում են գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների արատորոշման, տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման տեղամաս:

Սեղմված բնական գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգի հսկիչ-կարգավորման աշխատանքները կատարվում են մեկ գազաբալոնից մատուցվող գազով շարժիչի աշխատելու դեպքում: Այդ դեպքում գազաբալոնում գազի բանվորական ճնշումը չպետք է գերազանցի 5,0 ՄՊա (50 կգ/սմ²): Մնացած գազաբալոնների փականները պետք է փակված լինեն: Եթե կարգավորման աշխատանքների կատարման դեպքում գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների սնումն իրականացվում է արտաքին աղբյուրից, ապա այդ աղբյուրը (սեղմված բնական գազով կուտակչային մարտկոց կամ շարժական ավտոգազալցավորող միջոց) պետք է տեղաբաշխված լինի շենքից դուրս` բաց հարթակի վրա:

Կանոնակարգված աշխատանքների կատարումից հետո անհրաժեշտության դեպքում գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներն ուղարկվում են սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով լցավորման, այնուհետև` սարքին ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղ.

գ) երբ գազաբալոնային սարքավորումները սարքին են, ավտոտրանսպորտային միջոցը` անսարք:

Գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների հերմետիկության ստուգումից հետո գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներն ուղարկվում են լվացման, այնուհետև բազային ավտոտրանսպորտային միջոցների ընթացիկ նորոգման գոտի` անսարքության վերացման համար:

Նորոգման աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտության դեպքում սարքին գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներն ուղարկվում են սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով լցավորման հարթակ, այնուհետև` սարքին ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղ.

դ) երբ ավտոտրանսպորտային միջոցը սարքին է, գազաբալոնային սարքավորումները` անսարք.

Գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների անսարքությունների, այդ թվում` դրա անհերմետիկության հայտնաբերման դեպքում գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներն ուղարկվում են գազի բացթողման (դատարկման)

կետ և գազաբալոններն ազատում են գազից՝ սույն բաժնի 4-րդ կետում նշված կարգով:
Գազի բացթողումը (դատարկումը) և գազաբալոնների գազազերծումը կատարվում է՝ երբ խախտված է գազաբալոնների հետ կապված փականաապահովչային արմատուրի և գազամուղի հերմետիկությունը,

եռակցման և ներկման աշխատանքների կատարման, գազաբալոնների, գազամուղագծի փոխարինման հետ կապված ընթացիկ նորոգման դեպքում, գազաբալոնների տեխնիկական վկայագրման համար գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վրայից դրանք հանելու դեպքում,

տեխնոլոգիական կամ տեխնիկական անհրաժեշտության, այդ թվում՝ հեղուկացված նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգը սեղմված օդով ճնշափորձարկման (փորձարկման) դեպքում:

Գազի բացթողումից (դատարկումից) հետո գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներն ուղարկվում են լվացման, այնուհետև՝ գազաբալոնային սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման տեղամաս, որտեղ կատարվում է անսարքության վերացում կամ առանձին հանգույցների փոխարինում:

Անսարքությունների վերացումից հետո գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներն ուղարկվում են սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով լցավորման և սարքին ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղ.

ե) երբ ավտոտրանսպորտային միջոցը և գազաբալոնային սարքերն անսարք են.

Այդ դեպքում հերմետիկության ստուգումից հետո գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներն ուղարկվում են գազի բացթողման (դատարկման) և գազաբալոնների գազազերծման կետ, որտեղ կատարվում են գազի բացթողման (դատարկման) և գազաբալոնների գազազերծման գործողություններ:

Այնուհետև ավտոտրանսպորտային միջոցներն ուղարկվում են լվացման և ընթացիկ նորոգման գոտի՝ գազաբալոնային սարքավորումների հետ կապ չունեցող անսարքությունների վերացման համար:

Անսարքությունների վերացումից հետո ավտոտրանսպորտային միջոցներն ուղարկվում են գազաբալոնային սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման տեղամաս, որտեղ վերացվում են գազաբալոնային սարքավորումների անսարքությունները: Սարքին գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներն ուղարկվում են սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով լցավորման և կայանատեղ:

2. Գազաբալոնային սարքավորման տեխնիկական սպասարկման տեսակներն ու բովանդակությունը

2.1. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումների դեպքում բազային մոդելների համար բնութագրական պլանային ներգործությունից բացի առաջանում են մի շարք աշխատանքներ՝ կապված գազաբալոնային սարքավորումների առկայության և յուրահատկության հետ:

2.2. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների համար սահմանված են տեխնիկական սպասարկման հետևյալ տեսակները՝

ամենօրյա տեխնիկական սպասարկում,

1-ին տեխնիկական սպասարկում,

2-րդ տեխնիկական սպասարկում,

սեզոնային սպասարկում,

գազաբալոնների տեխնիկական վկայագրում:

2.3. Գազավառելիքային սնման համակարգի առաջին և երկրորդ տեխնիկական սպասարկումների աշխատանքները կատարվում են բազային ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկման պարբերականությամբ:

Գազաբալոնային սարքավորումների սեզոնային սպասարկումը համատեղվում է հերթական երկրորդ տեխնիկական սպասարկման հետ և կատարվում է տարեկան մեկ անգամ:

2.4. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոնային սարքավորումների ամենօրյա տեխնիկական սպասարկումը.

Ամենօրյա տեխնիկական սպասարկումը կատարվում է գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գիծ դուրս գալուց առաջ և կազմակերպություն վերադառնալուց հետո՝ աշխատանքների հետևյալ բաշխմամբ՝

դուրս գալուց առաջ անհրաժեշտ է ստուգել՝

ա) գազային վառելիքով շարժիչի գործարկման հեշտությունը,

բ) շարժիչի աշխատանքը՝ պարապ ընթացքի ռեժիմով,

գ) շարժիչի աշխատանքը ծնկավոր լիսեռի պտտման տարբեր

հաճախականությունների դեպքում.

կազմակերպություն վերադառնալուց հետո կատարվում են հետևյալ աշխատանքները՝

ա) ստուգել գազաբալոնային սարքավորումների վիճակը և գազավառելիքային սնման համակարգի միացությունների հերմետիկությունը,

բ) գազաբալոնների արմատուրը մաքրել փոշուց և կեղտից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ լվանալ,

գ) ցածր ճնշման գազային ռեդուկտորից թափել նստվածքը,

դ) փակել մայրուղային (ծախասային) փականը և շարժիչն աշխատեցնելով սպառել գազավառելիքային սնման համակարգում եղած գազը,

ե) ստուգել բենզինի կաթոցի բացակայությունը վառելիքամուղների և էլեկտրամագնիսական փականի միացություններում:

2.5. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոնային սարքավորումների առաջին տեխնիկական սպասարկումը.

ա) ստուգել գազաբալոնների ու կալունակների վիճակն ու ամրակապումը,

բ) ստուգել լցավորման և ծախսային փականների աշխատունակությունը, վիճակն ու ամրակապումը,

գ) ստուգել գազաբալոնային սարքավորումների (բարձր ճնշման ռեդուկտորի, ցածր ճնշման ռեդուկտորի, կարբյուրատոր-խառնիչի, էլեկտրամագնիսական փական-գտիչի) ամրակապումը,

դ) ցածր ճնշման գազային ռեդուկտորից թափել նստվածքը,

ե) ստուգել գազավառելիքային սնման համակարգի հերմետիկությունը,

զ) ստուգել և անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն կարգավորել գազով և շարժիչային հեղուկ վառելիքով աշխատելիս շարժիչից արտանետվող գազերում թունավոր բաղադրիչների պարունակությունը:

2.6. Գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների գազաբալունային սարքավորումների երկրորդ տեխնիկական սպասարկումը.

ա) ստուգել կալունակներին գազաբալունների ամրակապումը և վիճակը,

բ) ստուգել կալունակների ամրակապումը թափփին, հարթակին կամ շրջանակին և դրանց վիճակը,

գ) ստուգել գազամուղի, լցավորման և ծախսային փականների ամրակապումն ու վիճակը,

դ) ստուգել գազաբալունային սարքավորումների (բարձր ճնշման ռեդուկտորի, ցածր ճնշման ռեդուկտորի, կարբյուրատոր-խառնիչի, էլեկտրամագնիսական փական-գտիչի) ամրակապումը,

ե) ցածր ճնշման գազային ռեդուկտորից թափել նստվածքը,

զ) հանել ծախսային փականի խեցեգործական գտիչը, մաքրել և տեղադրել տեղում, ստուգել խցարար միջադիրի վիճակը,

է) հանել էլեկտրամագնիսական փական-գտիչի միջուկը, լվանալ, փչահարել, տեղադրել տեղում (կատարվում է միայն «ԳԱՁ» մակնիշի ավտոմոբիլների համար),

ը) քանդել խառնիչը, հանել հետադարձ կափույրը, կափույրից հեռացնել նստվածքը, մաքրել կոթի վռանի ներքին մակերեսը, կափույրը դնել տեղը (կատարվում է միայն «ԶԻԼ» մակնիշի ավտոմոբիլների համար),

թ) ստուգել և անհրաժեշտության դեպքում աշխատանքային ճնշմամբ կարգավորել բարձր ճնշման ռեդուկտորը (սեղմված բնական գազով աշխատող գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների համար),

ժ) ստուգել ցածր ճնշման ռեդուկտորի երկրորդ աստիճանի կափույրի հերմետիկությունը և կոթի ընթացքը, անհրաժեշտության դեպքում կարգավորել և փոխել կափույրի խցարարը,

ժա) ստուգել պարապ ընթացքի նվազագույն պտտման հաճախականությամբ ցածր ճնշման ռեդուկտորի երկրորդ աստիճանում գազի ճնշումը և անհրաժեշտության դեպքում կարգավորել,

ժբ) ստուգել դրոսելային փականի լրիվ բացմամբ կարբյուրատոր-խառնիչի հաղորդակի գործողությունը,

ժգ) ստուգել գազավառելիքային սնման համակարգի հերմետիկությունը,

ժդ) կարգավորել պարապ ընթացքի պտտման նվազագույն հաճախականությունը և անցումային ռեժիմները, ստուգել և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն կարգավորել գազով և շարժիչային հեղուկ վառելիքով աշխատելիս շարժիչից արտանետվող գազերում թունավոր բաղադրիչների պարունակությունը:

2.7. Գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների գազաբալունային սարքավորումների սեզոնային սպասարկումը.

ա) սեղմված բնական գազով աշխատող գազաբալունային ավտոտրանսպորտային

միջոցների վրայից հանել բարձր ճնշման ռեդուկտորը, քանդել, մաքրել, լվանալ՝ ստուգել ռեդուկցավորման կափույրի և հրիչի վիճակը, անհրաժեշտության դեպքում փոխել,

լվանալ և փչահարել բարձր ճնշման ռեդուկտորի խեցեգործական գտիչը, անհրաժեշտության դեպքում փոխել,

փոխել դիաֆրագման (խտրոցը),

հավաքել բարձր ճնշման ռեդուկտորը,

կարգավորել բարձր ճնշման ռեդուկտորի աշխատանքային ճնշումը և ապահովիչ կափույրի գործարկման ճնշումը, ստուգել հերմետիկությունը,

բարձր ճնշման ռեդուկտորը տեղադրել ավտոտրանսպորտային միջոցի վրա.

բ) ավտոտրանսպորտային միջոցի վրայից հանել ցածր ճնշման ռեդուկտորը.

փոխել առաջին աստիճանի դիաֆրագման և առաջին ու երկրորդ աստիճանների կափույրների խցարարները,

կարգավորել առաջին աստիճանի աշխատանքային ճնշումը, առաջին աստիճանի կափույրի ընթացքը, երկրորդ աստիճանի դիաֆրագմայի կոթի ընթացքը և երկրորդ աստիճանի կափույրի հերմետիկությունը,

ստուգել բեռնաթափման սարքի հերմետիկությունը,

ստուգել բաժնավորող-խնայարար սարքը խնայարարի կափույրի բացման պահին, անհրաժեշտության դեպքում փոխել,

ցածր ճնշման ռեդուկտորը տեղադրել ավտոտրանսպորտային միջոցի վրա.

գ) յուղել լցավորման և ծախսային փականների կոթերի պարուրակները.

դ) հանել, մաքրել և տեղադրել գազի և բենզինի էլեկտրամագնիսական կափույրների գտիչները.

ե) քանդել խառնիչը, հանել հակադարձ կափույրը, կափույրից հեռացնել նստվածքը, մաքրել ուղղորդ վռանի ներսի մակերեսը, հավաքել խառնիչը (կատարվում է միայն «ԶԻԼ» մակնիշի ավտոմոբիլների համար).

զ) հանել էլեկտրամագնիսական կափույրի միջուկը, լվանալ, քամահարել, տեղադրել տեղում (կատարվում է միայն «ԳԱԶ» մակնիշի ավտոմոբիլների համար).

է) ձգել կալունակներին գազաբալոնների ամրացումները.

ը) ձգել հենահարթակին կալունակների ամրացումը, իսկ «ԳԱԶ» մակնիշի ավտոմոբիլների համար՝ ձգել ավտոմոբիլի շրջանակին գազաբալոնների ամրացումը.

թ) ստուգել գազավառելիքային սնման համակարգի հերմետիկությունը.

ժ) կարգավորել ցածր ճնշման ռեդուկտորի երկրորդ աստիճանում գազի ճնշումը՝ շարժիչը պարապ ընթացքի նվազագույն հաճախականությամբ աշխատելու դեպքում.

ժա) կարգավորել շարժիչի ծնկավոր լիսեռի պտտման նվազագույն հաճախականությունը, անցումային ռեժիմները: Ստուգել և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն կարգավորել գազով և շարժիչային հեղուկ վառելիքով աշխատելիս շարժիչից արտանետվող գազերում թունավոր բաղադրիչների պարունակությունը.

ժբ) ստուգել գազաբալոնի բարձր ճնշման ճնշաչափը, կապարակնքել և դնել դրոշմ հաջորդ ստուգման ժամկետով (սեղմված բնական գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների համար).

ժգ) ստուգել գազաբալոնի հեղուկացված նավթային գազի մակարդակաչափիչի աշխատանքը, կապարակնքել և դնել հաջորդ ստուգման ժամկետի նշամաք դրոշմ (հեղուկացված նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների համար)։

ժդ) ստուգել շարժիչի ծնկավոր լիսեռի պտտման հաճախականության սահմանափակիչի աշխատանքը (գազադիզելային ավտոտրանսպորտային միջոցների համար)։

2.8. Գազաբալոնների տեխնիկական վկայագրումը.

Գազաբալոնների տեխնիկական վկայագրումը կատարվում է մասնագիտացված կետերում՝ հաստատված կանոններին համապատասխան։

Կազմակերպություններում կատարվում են միայն ավտոմոբիլի վրա գազաբալոնները տեղադրելու և հանելու մոնտաժման-ապամոնտաժման աշխատանքներ։

Սեղմված բնական գազի համար նոր սերնդի գազաբալոնային սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման յուրահատուկ աշխատանքները (ներարկդային համակարգեր, գազադիզելային համակարգեր և այլն) պետք է արտացոլված լինեն դրանց շահագործման հրահանգներում։

3. Անհատական օգտագործման թեթև մարդատար գազաբալոնային ավտոմոբիլների տեխնիկական սպասարկումը

3.1. Ամենօրյա սպասարկում

ա) դուրս գալուց առաջ ստուգել գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների ագրեգատների վիճակը, ամրացումն ու հերմետիկությունը, գազաբալոնի և խողովակաշարի միացությունները (ակնադիտական, լսողությամբ, օձառի լուծույթի կամ հոսատորձիչի օգնությամբ)։

բ) ստուգել պարապ ընթացքի նվազագույն պտույտներով գազով շարժիչի գործարկման հեշտությունը և աշխատանքը շարժիչի ծնկավոր լիսեռի պտտման բարձրացած հաճախականության դեպքում։

գ) ստուգել սնման բենզինային համակարգի միացությունների հերմետիկությունը և շարժիչից ու փոխանցման տուփից յուղի կաթոցների բացակայությունը։ Վերադարձից հետո փակել գազաբալոնի վրայի ծախսային փականը, գազավառելիքային սնման համակարգից սպառել գազը և համոզվել սրահում և բեռնախցում գազի հոտի բացակայության մեջ։

3.2. Սպասարկումը 1,5-2,0 հազ. կմ վազքից հետո.

Կատարվում են ամենօրյա սպասարկմամբ նախատեսված բոլոր գործողությունները և լրացուցիչ ցածր ճնշման ռեդուկտորից և գոլորշարարից թափել նստվածքը, պտուտակահանել խցանը և թափելուց հետո կրկին փակել այն։

3.3. Սպասարկումը 6,0-6,5 հազ. կմ վազքից հետո.

Կատարվում են 3.1-ին և 3.2-րդ կետերով նախատեսված բոլոր գործողությունները և լրացուցիչ՝

ա) ստուգել գազաբալոնային սարքավորումների ագրեգատների վիճակն ու ամրացումը (ռեդուկտորները, գոլորշարարները, էլեկտրամագնիսական կափույրները,

վառելիքի տեսակի փոխարկիչը և առբերիչ խողովակաշարը),

բ) ստուգել սնման բենզինային համակարգի ագրեգատների վիճակն ու ամրացումները, ներառյալ՝ գազավառելիքային սնման համակարգը,

գ) ստուգել և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն կարգավորել շարժիչից արտանետվող գազերում թունավոր բաղադրիչների պարունակությունը:

3.4. Սպասարկումը 12,0-12,5 հազ. կմ վազքից հետո.

Կատարվում են 3.1-ին, 3.2-րդ և 3.3-րդ կետերով նախատեսված բոլոր գործողությունները: Լրացուցիչ՝ էլեկտրամագնիսական կափույր-գտիչից հանել գտող տարրը, մաքրել այն, սեղմված օդով փչահարել և տեղադրել:

3.5. Սպասարկումը 24,0-25,0 հազ. կմ վազքից հետո.

Խորհուրդ է տրվում կատարել տեխնիկական սպասարկման կայաններում: Կատարվում են 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված բոլոր գործողությունները և լրացուցիչ՝

ա) ստուգել կարբյուրատորի խառնիչ խուցի օդային և դրոսելային փականների հաղորդակների վիճակն ու գործողությունը,

բ) ստուգել արտաթող խողովակաշարին խառնիչի և կարբյուրատորի ամրացումը,

գ) ստուգող-կարգավորող ստենդի միջոցով ստուգել ամբողջ գազավառելիքային սնման համակարգի և դրա առանձին ագրեգատների հերմետիկությունն ու պարամետրերը (բացառել գազաբալոնը), այդ թվում՝

կափույրների հերմետիկությունը և ռեդուկտորի առաջին և երկրորդ աստիճաններում ճնշման մեծությունը,

բեռնաթափող սարքի հերմետիկությունը,

էլեկտրամագնիսական կափույրի հերմետիկությունը և աշխատունակությունը (գազային, բենզինային, գործարկման),

դ) փոխել էլեկտրամագնիսական գազային կափույրի գտիչ տարրը կամ հավաք կափույրը,

ե) լվանալ, փչահարել և ստուգել տաքացուցչի ջրային խողովակի հերմետիկությունը:

3.6. Սպասարկում՝ ըստ անհրաժեշտության.

ա) ստուգել և կարգավորել ցածր ճնշման ռեդուկտորի երկրորդ աստիճանում պարպման մեծությունը,

բ) բաժանավորչի կամ եռաբաշխչի վրա կարգավորիչ պտուտակների միջոցով կարգավորել դեպի գազի խառնարան գազի մատուցման քանակությունը,

գ) պարապ ընթացքի ռեժիմներով կարգավորել շարժիչի ծնկավոր լիսեռի պտտման հաճախականությունները,

դ) սահմանված ժամկետներին համապատասխան գազաբալոնների տեխնիկական վկայագրման դեպքում կատարվում է ստուգում, կարգավորում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև գազաբալոնների արմատորի նորոգում,

ե) ինժեկտորային և գազադիզելային համակարգերի տեխնիկական սպասարկումները կատարվում են դրանց շահագործման հրահանգների համաձայն:

4. Գազաբալոններից գազի բացթողումը (դատարկումը)

4.1. Սեղմված բնական գազի բացթողումը կամ հեղուկացված նավթային գազի դատարկումը գազաբալոնից իրականացվում է մասնագիտացված կետերում (կայաններում) հետևյալ դեպքերում՝

ա) գազաբալոնների վրա պարուրակային միացությունների, փակիչ-ապահովիչ արմատուրի և գազամուղների միացման տեղերի հերմետիկության խախտման ժամանակ,

բ) գազաբալոնների և միացնող գազամուղների փոխման հետ կապված ընթացիկ նորոգումների ու եռակցման և ներկման աշխատանքների ժամանակ,

գ) հեղուկացված նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների մոտ 1,6 ՄՊա ճնշմամբ սեղմված օդով կամ չեզոք գազով (N_2CO_2) գազավառելիքային սնման համակարգի փորձարկման (ճնշափորձարկման) ժամանակ,

դ) վկայագրման կամ փոխարինման նպատակով գազաբալոնը հանելու ժամանակ:

4.2. Սեղմված բնական գազի բացթողումը կատարվում է լցավորման կամ հատուկ փականի միջոցով, որոնց վրայից պետք է հանված լինի ապահովիչ թասակը:

Գազաբալոններից գազի բացթողման հսկողությունն իրականացնում են գազավառելիքային սնման համակարգի սեղմված բնական գազի ճնշաչափով:

Այդ գործողության դեպքում մայրուղային փականը պետք է փակ լինի, իսկ ծախսային փականները՝ բաց:

Շարժիչի գազավառելիքային սնման համակարգից գազը պետք է նախապես սպառել:

Գազի բացթողումից հետո որոշ դեպքերում անհրաժեշտ է գազաբալոնները գազազերծել (չեզոք գազով փչամաքրել):

4.3. Հեղուկացված նավթային գազի դատարկումը գազաբալոնից կատարվում է հատուկ ռեզերվուարի մեջ հետևյալ կարգով՝

ա) շարժիչը գործարկել գազային վառելիքով,

բ) փակել գազաբալոնի վրայի ծախսային փականը և շարժիչն աշխատացնել մինչև դրա ինքնակամ կանգառը,

գ) անջատել վառոցքը,

դ) գազային ֆազայի փականին միացնել փողրակը՝ արտամղման համակարգից գազաբալոնի գազային ճնշումը 1,5 - 2,0 մթնոլորտային ճնշումից ավելի ճնշման տակ իներտ գազ կամ ազոտ մատուցելու համար,

ե) հեղուկացված գազի կուտակման ռեզերվուարի փողրակը միացնել գազաբալոնի լցման փականին,

զ) բացել ռեզերվուարից և արտամղող համակարգից եկող փողրակների ծորակները,

է) բացել գազաբալոնի լցման և գազային ֆազայի փականները և հեղուկացված գազը գազաբալոնից արտամղել ռեզերվուարի մեջ,

ը) փակել գազաբալոնի լցման և գազային ֆազայի փականները,

թ) փակել ռեզերվուարի և արտամղման համակարգի ծորակները,

ժ) բացել գազային ֆազայի փականն ու արտաթողման խողովակի ծորակը և հեռացնել հեղուկացված նավթային գազի գոլորշին, մինչև գազաբալոնում 0,1 ՄՊա-ն չգերազանցող ճնշումը,

ժա) փակել գազային ֆազի փականը և արտաթողման խողովակի ծորակը և փողրակն

անջատել փականից,

ժբ) անհրաժեշտության դեպքում գազաբալոնը հանել գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցի վրայից:

III. ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՐՏԱՊՐԱԿԱՆ ԲԱԶԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

1. Ընդհանուր պահանջները

1.1. Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներ շահագործող կազմակերպությունների արտադրական բազան պետք է համապատասխանի շենքերին, շինություններին, արտադրամասերին, սարքավորումներին, գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների պահման հարթակներին և այլնին ներկայացվող անվտանգության նորմատիվները կանոնակարգող համապատասխան նորմատիվ փաստաթղթերի պահանջներին:

Այդպիսի փաստաթղթերի թվին են դասվում՝

պետական ստանդարտները,

շինարարական նորմաներն ու կանոնները,

հրդեհային անվտանգության նորմաներն ու կանոնները,

սարքավորումների շահագործման նորմաներն ու կանոնները,

զանազան գերատեսչական ուղեցուցային փաստաթղթերը:

1.2. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներ շահագործող կազմակերպությունների համար հրդեհային անվտանգության պահանջների ապահովման տեսանկյունից գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև փակ շինություններում դրանց պահման եղանակները կախված են շինությունների ազատ ծավալից:

1.3. Այն դեպքում, երբ գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման, ընթացիկ նորոգման և պահման համար կազմակերպության արտադրական շինությունների ազատ ծավալները փոքր են [V] թույլատրելի ծավալից, ապա գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցները տեխնիկական սպասարկման, ընթացիկ նորոգման և պահման գոտի կարող են մտնել միայն գազից դատարկված գազաբալոններով:

1.4. Այն դեպքում, երբ գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման, ընթացիկ նորոգման և պահման համար կազմակերպության արտադրական շինությունների ազատ ծավալները մեծ են [V] թույլատրելի ծավալից, ապա գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցները գազավառելիքային սնման համակարգի սարքավորման հերմետիկության ապահովման դեպքում տեխնիկական սպասարկման, ընթացիկ նորոգման և պահման գոտի կարող են մտնել առանց գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոններից գազի նախնական բացթողման:

1.5. Գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման, ընթացիկ նորոգման և այլ աշխատանքների համար կազմակերպություններում եղած կետերի (բոքսերի) օգտագործման հնարավորությունը կամ նորը ստեղծելու անհրաժեշտությունը որոշվում է նախագծման ելակետային տվյալներին համապատասխան կազմակերպության արտադրական բազայի շինարարության բանվորական նախագծի մշակման փուլում:

1.6. Գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների համար տեխնիկական սպասարկման (ընթացիկ նորոգման) կետերի քանակի հաշվարկման դեպքում պետք է ելնել նրանից, որ գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների համար տեխնիկական սպասարկման պարբերականությունը և տեխնիկական սպասարկման ու ընթացիկ նորոգման գոտում կետերի նորմաները 1000 կմ վազքի դեպքում սահմանվում են նույնը, ինչ նավթային վառելիքով շահագործվող բազային մոդելների համար:

1.7. Սեղմված բնական գազով աշխատող գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման արտադրամասի երկրաչափական ծավալի թույլատրելի մեծությունը որոշվում է՝ ելնելով փակիչ փական ունեցող գազաբալունից (գազաբալուններից) սեղմված բնական գազի հնարավոր առավելագույն վթարային արտանետման պայմանից՝ անկախ արտադրամասում միաժամանակ գտնվող գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների թվից:

Արտադրամասում վթարային օդափոխության բացակայության դեպքում արտադրամասի թույլատրելի նվազագույն երկրաչափական ծավալը չպետք է փոքր լինի վթարի հետևանքով արտադրամաս թափանցող գազի զանգվածի (կգ-ով) 435-ապատիկի չափից՝

$$[V] = 435 M \text{ մ}^3, \text{ որտեղ՝}$$

[V]-ն տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման արտադրամասի երկրաչափական ծավալի թույլատրելի նվազագույն մեծությունն է՝ մ³-ով,

M-ն վթարի հետևանքով արտադրամաս թափանցող սեղմված բնական գազի զանգվածն է՝ կգ-ով:

1.8. Գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման արտադրամասի երկրաչափական ծավալի թույլատրելի մեծությունը որոշվում է՝ ելնելով հեղուկացված նավթային գազի հնարավոր առավելագույն վթարային արտանետման պայմանից՝ անկախ արտադրամասում միաժամանակ գտնվող գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների թվից:

Արտադրամասում վթարային օդափոխության բացակայության դեպքում արտադրամասի թույլատրելի նվազագույն երկրաչափական ծավալը չպետք է փոքր լինի վթարի հետևանքով արտադրամաս թափանցող գազի ծավալի (լիտրերով) 170-ապատիկի չափից՝

$$[V] = 170 V \text{ ր} \text{ մ}^3, \text{ որտեղ՝}$$

[V]-ն տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման արտադրամասի երկրաչափական ծավալի թույլատրելի նվազագույն մեծությունն է՝ մ³-ով,

Մբ -ն վթարի հետևանքով արտադրամաս թափանցող հեղուկացված գազի ծավալն է՝ լիտրով:

1.9. Նույն արտադրամասում տարբեր գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների կամ տարբեր ծավալի գազաբալոններով ավտոտրանսպորտային միջոցների սպասարկման (պահման) դեպքում արտադրամաս թափանցող գազի զանգվածը (ծավալը) որոշվում է՝ ելնելով մեկ փակիչ փական ունեցող գազաբալոնի (գազաբալոնների) առավելագույն տարողությունից:

2. Գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների հերմետիկության ստուգման կետը

2.1. Գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների հերմետիկության ստուգման կետը կարող է կազմակերպվել անմիջականորեն կազմակերպության վերահսկման-բացթողման կետում կամ հատուկ առանձնացված հարթակի վրա:

2.2. Կետի հարթակը պետք է ունենա պինդ անհրկիզելի ծածկ: Հարթակի չափերը պետք է հավասար լինեն շահագործվող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցի առավելագույն չափերին՝ ավելացված 1,5 մ-ից ոչ պակաս յուրաքանչյուր կողմին:

2.3. Կետի հարթակը պետք է ունենա առնվազն 2 կողմում չպարսպվող կառուցվածքով չհրկիզվող նյութերից պատրաստված շվաքարան: Թույլատրվում է փչահարվող պարիսպ՝ պարսպի յուրաքանչյուր կողմի մակերեսի 35%-ից ոչ պակաս մակերեսով՝ մշտապես բաց բացվածքով:

2.4. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների կտուրին տեղակայված գազաբալոնների փականաապահովչային արմատուրի և գազային խողովակաշարի միացությունների հերմետիկության ստուգման համար (օրինակ՝ սեղմված բնական գազով աշխատող ավտոբուսներ) կետը պետք է ունենա առավելագույն բարձրությամբ գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների կտուրի մակարդակի տեխնոլոգիական հարթակով անշարժ կամ շարժական սանդուղք:

2.5. Գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների հերմետիկության ստուգումն իրականացվում է հոսաորոշիչ սարքի օգնությամբ: Հոսաորոշիչ սարքը պետք է ունենա լուսային և ձայնային ազդանշանում: Թույլատրվում է լուծույթների օգտագործումը:

2.6 Գազավառելիքային սնման համակարգի սարքավորումների կառուցվածքում գազի հոսակորստի ազդանշանային համակարգեր ունեցող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների մոտ կատարվում են այդ համակարգերի աշխատունակության ստուգում:

3. Սեղմված բնական գազի բացթողման ու կուտակման և գազաբալոնների գազազերծման կետը

3.1. Գազաբալոնների արմատուրի, խողովակաշարի միացնող տարրերի հերմետիկության խախտմամբ կամ գազավառելիքային սնման համակարգում անսարքություններ ունեցող գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների մոտ անհրաժեշտություն է առաջանում գազաբալոններից գազը բաց թողնել և դրանք

գազագերծել իներտ գազով:

3.2. Շատ (25 և ավելի) գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներ ունեցող կազմակերպություններում նպատակահարմար է ստեղծել սեղմված բնական գազի բացթողման, կուտակման և գազաբալոնների գազագերծման կետ, որտեղ իրականացվում են՝

ա) գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցի գազաբալոններից գազի բացթողում,

բ) գազաբալոններից բաց թողնված գազի կուտակում՝ հատուկ տարողությունների մեջ,

գ) իներտ գազով գազաբալոնների գազագերծում,

դ) կուտակած գազի օգտագործումը կազմակերպության տեխնոլոգիական կարիքների համար (նորոգված շարժիչների զելում, ձմռան ժամանակ գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների շարժիչների տաքացում և այլն),

ե) կուտակած գազի օգտագործումը գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների լցավորման համար:

3.3. 25 հատից պակաս գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներ ունեցող կազմակերպություններում անհրաժեշտ է ստեղծել գազի բացթողման և գազաբալոնների գազագերծման կետ:

Կետի տեղակայանքի սխեման պատկերված է N 1 գծապատկերում:

Տեղակայանքը կազմված է բարձր և ցածր ճնշման գազամուղներից, իներտ գազով լցված գազաբալոնից, փակիչ-ապահովիչ արմատուրից և գազի արտաթողման «մոմային» սարքից:

Բարձր ճնշման գազամուղը նախատեսված է գազաբալոններից գազի բացթողման համար:

Այդ գազամուղը գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցի հետ միանում է ձկուն փողրակի և հատուկ միացման գլխիկի միջոցով:

Ցածր ճնշման գազամուղը նախատեսված է գազաբալոնները 0,3-0,4 ՄՊա ճնշման տակ իներտ գազով փչահարման համար:

Գազը մթնոլորտ է բաց թողնվում 6 մ-ից ոչ պակաս բարձրության վրա:

4. Հեղուկացված նավթային գազի դատարկման կետը

4.1. Հեղուկացված նավթային գազի դատարկման կետը պետք է ունենա՝

ա) գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեղակայման համար կոշտ ծածկույթով հարթակ, որի չափերը գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների առավելագույն զարբիտից պետք է առնվազն 1,5 մ-ից ավելի լինեն,

բ) վերգետնյա կամ ստորգետնյա ռեզերվուար՝ հեղուկացված նավթային գազի համար,

գ) ավտոմոբիլի գազաբալոնից գազի դատարկման և գազաբալոնի գազագերծման ժամանակ դրանում ավելցուկային ճնշում ստեղծող սարքավորումներ,

դ) շինություն՝ պոստն սպասարկող անձնակազմի համար (մեկ աշխատողի համար 4,5 քառ. մետր հաշվարկով):

4.2. Հեղուկացված նավթային գազի դատարկման պոստի հարթակը պետք է

տեղաբաշխված լինի չհրկիզվող նյութից պատրաստված ծածկարանի տակ:

4.3. Ծածկարանն առնվազն 2 կողմից չպետք է ունենա պարսպապատում:

4.4. Հեղուկացված նավթային գազի դատարկման հարթակը պետք է տեղաբաշխված լինի կազմակերպության տարածքի քամահարվող մասում:

4.5. Հեղուկացված նավթային գազի կետի հարթակի հեռավորությունը կազմակերպության շենքերից, շինություններից և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղից պետք է լինի ոչ պակաս 20 մ-ից, իսկ ստորգետնյա ռեզերվուարներինը՝ ոչ պակաս 40 մ-ից:

4.6. Հեղուկացված նավթային գազի դատարկման պոստի տեղաբաշխումը և հատակագծումը պետք է բացառի հեղուկացված նավթային գազի թափվելը շրջակա տարածքում:

4.7. Հեղուկացված նավթային գազի դատարկման պոստի մոտի անցումները պետք է կայուն լինեն նավթամթերքների ներգործությանը և բացառեն կայծագոյացումը:

4.8. Հեղուկացված նավթային գազի դատարկման պոստը պետք է ունենա հրդեհային և վթարային ազդարարման, ինչպես նաև հրդեհաշիջման համակարգ:

5. Հեղուկացված նավթային գազի գազաբալոնների գազազերծման կետը

5.1. Հեղուկացված նավթային գազը դատարկելուց և գոլորշային ֆազային մնացորդը հեռացնելուց հետո գազաբալոնը հանվում է գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցի վրայից և ուղարկվում գազազերծման կետ:

5.2. Հեղուկացված նավթային գազը դատարկելուց հետո գազաբալոնի գազազերծումը կարող է կատարվել չեզոք կամ չայրվող գազով (հելիում, արգոն, ազոտ, ածխաթթու գազ և այլն) կամ գոլորշիով:

5.3. Գազաբալոնների գազազերծման կետը կարող է համատեղվել հեղուկացված նավթային գազի դատարկման կետի հետ կամ տեղաբաշխված լինել առանձին:

5.4. Գոլորշիով գազաբալոնի գազազերծումից հետո ջրի մնացորդը պետք է դատարկվի առանձին նստվածքակուտակչի մեջ: Մինչև կոյուղու ցանցին միանալը նստվածքակուտակչի կառուցվածքում պետք է նախատեսել միապատիկից ոչ պակաս բնական օդափոխություն և հիդրոփական:

5.5. Գազաբալոնի գազազերծումից հետո գազային կամ գոլորշագազային խառնուրդի հեռացումը պետք է իրականացվի արտաթողման խողովակի միջոցով:

5.6. Արտաթողման խողովակի տրամագիծը 50 մմ-ից պակաս չպետք է լինի, իսկ բարձրությունը հատակի մակարդակից 6 մ-ից ոչ պակաս, իսկ մինչև 20 մ շառավղով մոտակա շենքերի տանիքից՝ 2 մ-ից ոչ պակաս բարձրությամբ:

Արտաթողման խողովակը պետք է ունենա խլացուցիչ:

5.7. Գազաբալոնների գազազերծման կետից մինչև մոտակա արտադրական նշանակության շենքերն ու շինությունները եղած հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս 18 մ-ից, իսկ բնակելի և հասարակական շենքերից՝ 20 մ-ից ոչ պակաս:

5.8. Հեղուկացված նավթային գազի գազաբալոնների գազազերծման կետը կարող է համատեղվել սեղմված բնական գազի գազաբալոնների գազազերծման կետի հետ, եթե այդպիսին կա կազմակերպությունում: Այդ դեպքում գազաբալոնների գազազերծումը կատարվում է չեզոք գազով (N_2CO_2 և այլն):

6. Ավտոմոբիլային դատարկ գազաբալոնների պահպանման տեղամասը

Մեղմված բնական գազի համար դատարկ գազազերծված գազաբալոնների պահումը կազմակերպության տարածքում կարող է իրականացվել հատուկ շինություններում, բաց հարթակներում, գազի կուտակման և գազաբալոնների գազազերծման կետին կից պահեստում: Դատարկ, գազազերծված գազաբալոնների պահման բաց հարթակները պետք է ունենան դեպի գազաբալոնները կողմնակի անձանց մուտքը սահմանափակող, ամբողջ պարագծով մետաղյա ցանցային պարիսպ:

7. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոնային սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման տեղամասը

Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոնային սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման տեղամասի հատակագիծը պատկերված է N 2 գծապատկերում, որն իր մեջ ներառում է մեկ մեքենատեղով կետ և գազաբալոնային սարքավորումների նորոգման և կարգավորման համար արտադրամաս: Անհրաժեշտ է տեղամասը տեղաբաշխել հիմնականում արտադրական մասնաշենքում, այլ սենյակներից միջնապատով (պատով) մեկուսացված հատուկ սարքավորված առանձին զետեղարանում:

Հաշվի առնելով կազմակերպության կոնկրետ պայմանները՝ նախագծային լուծումները կարող են ձևափոխվել: Տարբերակային կատարմամբ թույլատրվում է գազավառելիքային սնման համակարգի կարգավորումը կատարել արատորոշման կետերում՝ դրանք առանձին մեկուսացված զետեղարաններում տեղաբաշխելու դեպքում:

Գազավառելիքային սնման համակարգի ընթացիկ նորոգումը թույլատրվում է կատարել կարբյուրատորային և դիզելային շարժիչների սնման սարքերի նորոգման տեղամասերում:

Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցները կցորդներով շահագործելու դեպքում մեքենատեղի կետը պատրաստվում է անցողիկ:

Տեղամասում կատարվում են գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցի գազաբալոնային սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ իրենց մեջ ներառելով՝

գազաբալոնային սարքավորումների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցի վրա,

գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցից հանված գազաբալոնային սարքավորումների նորոգում և կարգավորում,

գազաբալոնային սարքավորումների լվացում և պահպանում,

գազավառելիքային սնման համակարգի հերմետիկության ստուգում:

Կետերի քանակը որոշվում է հաշվարկային եղանակով՝ ելնելով գազաբալոնային սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման արտադրական ծրագրից:

Գազաբալոնային սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ

նորոգման արտադրամասի օրինակելի հատակագիծը բերված է N 3 գծապատկերում:

IV. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶՈՎ ԳԱԶԱԲԱՆՈՆԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

1. Ընդհանուր պահանջները

1.1. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների շահագործման գծով կազմակերպչական-տեխնոլոգիական և տեխնիկական գործունեությունն անմիջականորեն պետք է գլխավորեն կազմակերպությունների (անկախ դրանց կազմակերպաիրավական և սեփականության ձևերից) ղեկավարները կամ գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների սեփականատեր անհատ քաղաքացիները, որոնք օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկապես ճիշտ շահագործման համար:

1.2. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների շահագործման գծով գործնական աշխատանքը՝ ներառյալ ավտոտրանսպորտային միջոցները սեղմված, բնական գազով աշխատելու համար գազաբալոնային սարքավորումների տեղադրման հետ կապված հարցերի լուծումը և գազաբալոնների վկայագրումը պետք է իրականացնեն գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման համար անհրաժեշտ համապատասխան արտադրական բազա, նորմատիվ փաստաթղթեր և որակավորված մասնագետներ ունեցող կազմակերպությունների տեխնիկական ծառայությունները:

(1.2 կետը փոփ. 20.11.08 N 1407-Ն)

1.3. Համապատասխան արտադրական բազա ունեցող կազմակերպություններում նորոգումները կարող են իրականացվել բազային ավտոտրանսպորտային միջոցների սպասարկման պոստերում և գծերում՝ բացառությամբ գազաբալոնային սարքավորումների գծով հատուկ աշխատանքների:

1.4. Ավտոմոբիլների գազալցման կոմպրեսորային կայաններում և ոչ ավտոտրանսպորտային կազմակերպություններում գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումները, արատորոշումը և նորոգումը կարող են իրականացվել հատուկ նախապատրաստված գոյություն ունեցող կամ նոր կառուցվող շինություններում (զետեղարաններ):

1.5. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վրայից հանված գազաբալոնային սարքավորումների գծով վերահսկիչ-կարգավորման, արատորոշման և ընթացիկ նորոգման աշխատանքներն անհրաժեշտ է կատարել գազաբալոնային սարքավորման տեխնիկական սպասարկման ու նորոգման հատուկ տեղամասում:

1.6. Անմիջապես գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վրա սեղմված բնական գազով աշխատելու համար գազաբալոնային սարքավորումների կարգավորումը գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների շարժիչից արտանետվող գազերի թունավորության ստուգումն անհրաժեշտ է կատարել այդ նպատակների համար հատուկ կահավորված աշխատատեղերում (պոստերում):

1.7. Գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների մուտքը տեխնոլոգիական տեղամասեր, պոստեր և գծեր՝ ներառյալ գազաբալունային սարքավորման տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման հատուկ տեղամասերը, պետք է իրականացնել միայն գազաբալունային սարքավորումների փականների, խողովակամուղների ու հանգույցների միացությունների հերմետիկության պարտադիր ստուգումից հետո:

1.8. Փակող և միացնող արմատուրի հերմետիկությունն ստուգվում է հատուկ հարթակների վրա կամ ավտոտրանսպորտային միջոցների վերահսկիչ-բացթողման կետերում՝ հատուկ սարքերով (հոսաորոշիչներով) կամ միացություններն օճառաջրով պատելու միջոցով:

1.9. Գազաբալունային սարքավորման հերմետիկության խախտման դեպքում գազաբալուններում եղած գազն անհրաժեշտ է բաց թողնել գազաբացթողման հարթակներում՝ անհրաժեշտության դեպքում հետագայում գազաբալունները գազազերծել 0,2 - 0,3 ՄՊա (2-3 կգ/սմ²) չեզոք կամ չայրվող գազով (ազոտ, ածխաթթու գազ և այլն):

1.10. Մեղմված բնական գազով աշխատող գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների պահումը կարող է իրականացվել ինչպես բաց կայանատեղերում, այնպես էլ փակ շինություններում՝ պահպանելով հակահրդեհային, օդափոխության և ազդանշանային սահմանված նորմերի պահանջները:

1.11. Գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների մուտքը պահման, տեխնիկական սպասարկումների ու ընթացիկ նորոգումների շինություններ և շինությունների ներսում դրանց տեղաշարժը կարող է իրականացվել շարժիչը ինչպես նավթային վառելիքով, այնպես էլ գազով աշխատելու դեպքում, եթե ապահովված է գազավառելիքային սնման համակարգի սարքավորման հերմետիկությունը և հնարավոր չէ գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցի շարժիչի աշխատանքը նավթային վառելիքով (ավտոտրանսպորտային միջոցի վառելիքի բաքում բացակայում է նավթային վառելիքը, շարժիչն աշխատում է միայն գազով, շարժիչի նավթային վառելիքով սնման համակարգն անսարք է):

1.12. Բացի այդ, գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցի շարժիչը գազով աշխատելու դեպքում գազը պետք է վերցվի միայն մեկ գազաբալունից և դրանում բանվորական ճնշումը չպետք է գերազանցի 5,0 ՄՊա-ն: Մնացած գազաբալունների փականները պետք է փակված լինեն:

1.13. Գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցի մուտքը լվացման տեղամաս կամ կայանատեղ կարող է իրականացվել շարժիչն ինչպես նավթային, այնպես էլ գազով աշխատելու դեպքում, պայմանով, որ ապահովված լինի գազավառելիքային սնման համակարգի սարքավորման հերմետիկությունը:

1.14. Հրդեհավտանգ աշխատանքներ (եռակցում, ներկում, հակակոռոզիոն մշակում) կատարելու համար նախատեսված շենքեր և վառելիքաքսուքային նյութերի պահեստներ գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների մուտքը թույլատրվում է միայն նախօրոք գազից դատարկված և գազազերծված գազաբալուններով և օժանդակ միջոցների օգնությամբ՝ նշված աշխատանքների կատարման ժամանակ հրդեհային անվտանգության միջոցների պահպանմամբ:

1.15. Գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների շահագործման

պրոցեսում գազով դրանց լիցքավորման հնարավորության դեպքում հեղուկ նավթային վառելիքի օգտագործումը խորհուրդ է տրվում միայն բացառիկ դեպքերում՝ ձմռանը շարժիչը գործարկելիս, ճանապարհին գազավառելիքային սնման համակարգի անսարքության կամ հերմետիկության կորստի դեպքում, տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման զոնաներում ու այլ շենքերում տեղաշարժման դեպքում և այլն:

1.16. Դիզելային և բենզինային ավտոտրանսպորտային միջոցները գազաբալոնայինի վերասարքավորելու, գազաբալոնների վկայագրման, դրանց սպասարկման և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների շահագործման հետ կապված նորոգող բանվորներն ու սպասարկող անձնակազմը, ինժեներատեխնիկական աշխատողներն ու ղեկավարները պետք է անցնեն ուսուցում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված աշխատանքի պաշտպանության, ճնշման տակ աշխատող անոթների կառուցվածքի ու անվտանգ շահագործման, անշարժ ճնշակային տեղակայանքների, օդամուղների ու գազամուղների կառուցվածքի ու անվտանգ շահագործման, գազային տնտեսությունում անվտանգության կանոնների պահանջներին համապատասխան և ունենան նշված աշխատանքների կազմակերպման ու կատարման իրավունքի վկայական:

1.17. Սույն մասի 1.2-1.16-րդ կետերում նշված կանոնները խախտող պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում, անկախ նրանից, թե այդ խախտումները վթարի կամ դժբախտ պատահարի պատճառ են դարձել, թե ոչ և կարող են ենթարկվել օրենքով նախատեսված կարգապահական ու այլ պատասխանատվության՝ կախված խախտման բնույթից և դրա հետևանքների ծանրությունից:

1.18. Բանվորները պատասխանատվություն են կրում սույն մասի 1.3-1.16-րդ կետերում նշված կանոնների խախտման համար կազմակերպության ներքին աշխատանքային կարգապահության կանոնների պահանջներով սահմանված կարգով:

1.19. Յուրաքանչյուր աշխատող սույն մասի 1.3-1.16-րդ կետերում նշված կանոնների դրույթների խախտում հայտնաբերելու դեպքում պարտավոր է դրա մասին հայտնել իր անմիջական ղեկավարին, իսկ նրա բացակայության դեպքում՝ վերադաս ղեկավարին:

1.20. Գազի, ինչպես նաև սեղմված օդի օգտագործման հետ կապված բոլոր վթարների ու դժբախտ պատահարների մասին կազմակերպության գործադիր մարմինը պարտավոր է անմիջապես հայտնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված լիազորություններ ունեցող պետական տեխնիկական հսկողության մարմիններին:

1.21. Կազմակերպության գործադիր մարմինն արտադրության և սարքավորումների յուրահատկությունը հաշվի առնելով պետք է մշակի յուրաքանչյուր առանձին մասնագիտության (աշխատանքի տեսակի) համար աշխատանքի պաշտպանության հրահանգ՝ ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմատիվ ակտերի պահանջներից: Հրահանգները հաստատվում են կազմակերպության գործադիր մարմնի կողմից:

2. Անվտանգության տեխնիկայի պահանջները գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վարորդների համար

2.1. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վարմանը թույլատրվում են

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի հաստատած ուսումնական պլանով և ծրագրով ուսուցում ստացած և քննություն հանձնած վարորդները:

Ծրագիրը նախատեսում է սովորողներին սովորեցնել գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների կառուցվածքի մասին տվյալներն ու տեղեկությունները և աշխատանքի պաշտպանության ու անվտանգության կանոնները:

2.2. Վարորդը պետք է՝

ա) գիծ դուրս գալուց առաջ գազի հոսակորստի և անսարքությունների բացահայտման նպատակով կատարել գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցի զննում, ստուգել գազաբալոնների և գազաբալոնային սարքավորումների ամրացումները,

բ) գազի հոսակորստի բացահայտման դեպքում փակել մայրուղային փականը և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցն էվակուացնել (տարհանել) մարդկանց համար անվտանգ վայր,

գ) շարժման ժամանակ գազի հոսի ի հայտ գալու դեպքում, կանգնեցնել գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցը, եթե հնարավոր է վերացնել անսարքությունը կամ պատահարի մասին հայտնել կազմակերպությանը,

դ) չաշխատող շարժիչի և անջատած էլեկտրականության դեպքում հատուկ հարթակի վրա կատարել գազի բացթողում, կտրականապես արգելվում է մարդկանց գտնվելու վայրի ու կրակի աղբյուրի մոտ կամ գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղին անմիջապես մոտ գտնվող կառույցներում (շինություններում) գազի արտաթողումը,

ե) երկար կանգնելուց հետո գազով շարժիչի գործարկումը կատարել բացված ծածկոցի (կապոտ) դեպքում,

զ) ձմռան ժամանակ գազաբալոնային սարքավորումները տաքացնել միայն տաք ջրով, գոլորշիով, տաք օդով կամ ինֆրակարմիր անբոց այրոցի օգտագործմամբ, բաց կրակի օգտագործումն անթույլատրելի է,

է) գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցի վրա հրդեհի դեպքում անջատել վառոցքը, փակել մայրուղային և ծախսային փականները, կրակը հանգցնել կրակմարիչով, ավագով կամ ջրի փոշիացված շիթով: Հրդեհի ժամանակ պայթյունից խուսափելու համար անհրաժեշտ է գազաբալոնները սառը ջրով ինտենսիվորեն հովացնել, չի թույլատրվում դրանց մեջ ճնշման բարձրացումը:

2.3. Վարորդը չպետք է՝

ա) շահագործի գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցը, որի մոտ անցել է գազաբալոնների հերթական վկայագրավորման ժամկետը,

բ) գազաբալոնները գազով լցավորելու ժամանակ կանգնել գազաբալոնների կամ լցավորման ճկափողի մոտ, կռանալ լցավորման փականի վրա, անջատել ճնշման տակ գտնվող լցավորող ճկափողը,

գ) ձգել ճնշման տակ գտնվող մանեկները կամ միացությունները, մետաղյա առարկաներով թխկացնելու ճնշման տակ գտնվող սարքերին ու գազամուղին,

դ) կատարել որևէ ընթացիկ նորոգում կամ ավտոմոբիլների գազալցման կոմպրեսորային կայանի տարածքում գազավառելիքային սնման համակարգի կարգավորում (եթե գազով լցավորելուց հետո ավտոմոբիլների գազալցման

կոմպրետորային կայանի տարածքում շարժիչի գործարկման դեպքում նկատվում են «տրաքոցներ», անհրաժեշտ է անմիջապես հանգցնել շարժիչը, իսկ գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցը կայանում եղած միջոցների օգնությամբ գլորել լցավորման սյունակից 15 մ հեռավորության վրա),

ե) սեղմված օդի կամ գազի որևէ աղբյուրի օգնությամբ ինքնուրույն կատարել գազավառելիքային սնման համակարգի փորձարկում:

2.4. Արգելվում է՝

ա) գազաբալոններում գազով, անսարք գազաբալոնային սարքավորումներով ավտոտրանսպորտային միջոցների պահումը բաց կայանատեղերում.

բ) գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնների տեղափոխությունը և փոխարինումը, առանց դրա շահագործման համար պատասխանատու անձի թույլտվության.

գ) երկար կայանման ժամանակ գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցները թողնել գազային մայրուղու և գազաբալոնների վրայի փականները բաց վիճակում.

դ) գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների թափքում կամ վարորդի խցիկում փոխադրել պայթյունավտանգ կամ հեշտ բռնկվող բեռներ:

2.5. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցները պետք է սարքավորված լինեն կրակմարիչով, թաղիքով, հատուկ գործիքներով:

3. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների սպասարկման և նորոգման ժամանակ անվտանգության տեխնիկայի պահանջները տեխնիկական անձնակազմի համար

3.1. Տեխնիկական անձնակազմը պետք է՝

ա) աշխատանքն սկսելուց առաջ ստուգի գործիքների ու սարքավորումների սարքինությունը, միացնի օդափոխությունը.

բ) գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումները նորոգի միայն գազամուղներում գազի ճնշման բացակայության դեպքում.

գ) գազով աշխատելու դեպքում, շարժիչի վրա կատարի միայն պարապ ընթացքի պտտման հաճախականության կարգավորում, մնացած բոլոր աշխատանքները կատարի չաշխատող շարժիչի դեպքում.

դ) գազաբալոնային սարքավորումների հանման և տեղադրման աշխատանքները կատարի հատուկ գործիքներով, այլ ոչ ձեռքի տակ եղած պատահական միջոցներով, ագրեգատները կարելի է հանել միայն հովացած վիճակում.

ե) եռակցման, ներկման աշխատանքները (ներառյալ տաք չորացումը), ինչպես նաև կայծեր արձակող էլեկտրագայլիկոնի, հղկումային նյութերի և այլնի հետ աշխատանքները կատարի միայն գազաբալոններում գազի լրիվ բացակայության դեպքում:

3.2. Արգելվում է՝

ա) գազաբալոնային սարքավորումների նորոգումը կատարել գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների թափքում կամ խցիկում՝ մարդկանց առկայության դեպքում,

- բ) շարժիչի գործարկումը գազի հոսակորստի դեպքում,
- գ) գազաբալուններից գազի բացթողումը սահմանված վայրից դուրս,
- դ) գազաբալունային սարքավորումների հանումն ու նորոգումը, դրանցում գազի առկայության դեպքում,
- ե) օգտվել անսարք գործիքներից,
- զ) միացությունների հերմետիկությունն ստուգել բոցի միջոցով և գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման դեպքում տեխնոլոգիական որևէ նպատակի համար բաց կրակից օգտվելը,
- է) լրացուցիչ լծակների օգտագործումը փականների բացման և փականն դեպքում,
- ը) գազով լցված գազաբալունները ներկից մաքրելը և ներկելը,
- թ) օգտվել յուղոտված ձկափողերից, ոլորված և ձգված ռետինե խողովակներից:

3.3. Շինությունում գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների վրա գազի հոսակորուստ առաջանալու և դրա վերացման անհնարինության դեպքում անհրաժեշտ է այն քարշարկելով հանել բաց տարածություն և օդափոխել շինությունը:

3.4. Գազաբալունային սարքավորումների տեխնիկական սպասարկումների կամ նորոգման ավարտից հետո գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցներն ուղարկվում են ընդհանուր կետեր՝ ամբողջությամբ տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման հետագա անցկացման համար:

4. Անվտանգության տեխնիկայի պահանջները գազաբալունների վկայագրման և գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների սնման գազավառելիքային համակարգերի փորձարկման կետերի աշխատողների համար

4.1. Գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների գազաբալունների վկայագրման և գազավառելիքային սնման համակարգերի փորձարկման կետերում աշխատանքի պաշտպանության կազմակերպումը պետք է լինի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ավտոմոբիլային տրանսպորտում աշխատանքի պաշտպանության, ճնշման տակ աշխատող անոթների կառուցվածքի ու անվտանգ շահագործման, անշարժ ճնշակային տեղակայանքների, օդամուղների ու գազամուղների կառուցվածքի ու անվտանգ շահագործման կանոնների պահանջներին համապատասխան:

4.2. Գազաբալունների վկայագրման անցկացման և 19.6 ՄՊա ճնշմամբ գազավառելիքային սնման համակարգերի փորձարկման աշխատանքներին թույլատրվում են մասնակցել բարձր ճնշմամբ անոթների հետ աշխատանքի դեպքում տեխնիկական անվտանգության կանոնների ու տեխնիկական մինիմումներին համապատասխան վերապատրաստում անցած և քննություն հանձնած կազմակերպության հրամանով առանձնացված անձանց:

4.3. Գազաբալունները վկայագրման ընդունելու դեպքում և գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերը փորձարկման ընդունելու դեպքում, պետք է ստուգված լինի դրանցում գազի բացակայությունը: Հակառակ դեպքում դրանք պետք է ենթարկվեն գազազերծման:

4.4. Գազաբալունների վկայագրման աշխատանքների անցկացման և գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի

փորձարկման դեպքում արգելվում է ճնշման տակ գտնվող խողովակաշարերի միացությունների կամ մանեկների ձգման կատարումը:

4.5. Գազաբալուններից սեղմված օդի (գազի) բացթողումը կատարվում է աղմկախլացուցչով սարքավորված հատուկ կառուցվածքի միջոցով:

4.6. Գազաբալունների վկայագրման տեղամասի և գազավառելիքային սնման համակարգերի փորձարկման տեղամասի զետեղարաններում (շենքերում) օտար անձանց գտնվելը խստիվ արգելվում է:

4.7. Գազաբալունների վկայագրման աշխատանքների կատարման և գազավառելիքային սնման համակարգերի փորձարկման դեպքում պետք է պահպանել տեխնոլոգիական գործողությունների կատարման հաջորդականությունը: Հաստոցների և տեղակայանքների վրա գործողությունների կատարումն իրականացվում է այդ սարքավորումների համար անվտանգության տեխնիկայի հրահանգներին համապատասխան: Հրահանգները պետք է փակցված լինեն բանվորական տեղերում:

4.8. Գազաբալունների հիդրոփորձարկում անցկացնելու ժամանակ սպասարկող անձնակազմը պետք է գտնվի կառավարման վահանակի մոտ՝ էլեկտրամեկուսիչ գորգի վրա և փորձարկման ընթացքին հետևի ստենդի վահանակի ապակու միջոցով:

4.9. Գազաբալունների պնևմափորձարկում անցկացնելու ժամանակ, երբ դրանցում առկա է սեղմված օդ, արգելվում է դուրս գալ ստենդի կառավարման վահանակի էկրանից:

4.10. Բեռամբարձ մեխանիզմների աշխատանքին թույլատրվում են դրանց կառուցվածքին և անվտանգ շահագործման կանոնների պահանջներին ծանոթացած անձինք:

4.11. Գազաբալունների ներկման համար խցերի շահագործման դեպքում անհրաժեշտ է ներսից և դրսից պահպանել մաքրություն: Չի թույլատրվում խցերը ծանրաբեռնել ներկեր, լուծիչներ պարունակող դույլերով ու բիդոններով (թիթեղամաններ), հղկող նյութերով և այլն:

Պարբերաբար (ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ) անց են կացվում խցերի օդափոխության ստուգողական փորձարկումներ, և արդյունքները գրանցվում են շահագործման մատյաններում:

4.12. Ներկված գազաբալունների չորացման համար՝ խցերի շահագործման դեպքում անհրաժեշտ է պահպանել ներկման ցեխերի անվտանգության տեխնիկայի, հրդեհային անվտանգության ու արտադրական սանիտարական նորմերն ու կանոնները և սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոնները:

Խցերն աշխատանքին նախապատրաստելու դեպքում ստուգում են՝

ա) վթարային ազդանշանային համակարգի գործարկվելիությունը,

բ) բլոկավորման աշխատանքի անվրեպությունը,

գ) հրդեհաշիջման համակարգի աշխատունակությունը:

Խցերի շահագործման դեպքում արգելվում է՝

ա) գազաբալունների չորացումը կատարել անսարք օդափոխության դեպքում,

բ) տեղակայանքին մոտ (15 մ-ից պակաս հեռավորության վրա) բաց կրակի և կայծագոյացման (եռակցման և այլն) օգտագործման հետ կապված աշխատանքների կատարումը,

զ) բլոկավորման և հրդեհաշիջման համակարգի անսարքությունների դեպքում աշխատելը:

Անսարքությունների և թերությունների բացահայտման դեպքում անմիջապես անջատել խցի էլեկտրասնուցումը, բացառությամբ օդափոխության:

Խուցը պարբերաբար ենթարկում են ստուգողական փորձարկման: Ստուգման արդյունքներն անց են կացնում շահագործման մատյանի մեջ: Բանվորական տեղում կատարում են օդային միջավայրի վիճակի ստուգում՝ ամսվա ընթացքում 2 անգամից ոչ պակաս:

Խցերի հանգույցների յուղումը, կարգավորումը և նորոգումը կատարում են միայն էլեկտրասնուցումն անջատելուց և մեխանիզմը կանգնելուց հետո:

Օդամուղները, օդափոխման բլոկները կայծ չարձակող գործիքների օգնությամբ ենթարկվում են կեղտոտվածությունից մաքրման:

4.13. Գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի փորձարկում անցկացնելու դեպքում անհրաժեշտ է ուշադիր զննել դրանց արմատուրը, խողովակաշարերն ու սարքերը:

Չպետք է լինեն անսարքություններ, վնասվածքներ ու նկատելի դեֆորմացիաներ (ձևափոխություններ):

ա) ճնշման տակ գտնվող գազավառելիքային սնման համակարգով գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների պահումն ու դրանց տեղաշարժը փորձարկման բոքսերում,


բ) գազաբալունները սեղմված օդով կամ սեղմված բնական գազով լցավորման ժամանակ գտնվել փորձարկման բոքսերի զետեղարանում (տեղամասում):

Բանվորական (հանձնարարված) ճնշման հասնելու պահի և ստուգողական գործողություններ կատարելու սկզբի միջև տևողությունը (պահը) փորձարկման յուրաքանչյուր փուլում պետք է կազմի 2 րոպեից ոչ պակաս:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**



Մ. Թովուզյան

Գծապատկեր N 1




Կազմակերպություններում գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնից գազի բացթողման և գազաբալոնի գազազերծման տեղակայանքի սխեման:

Ղեկավարման 4-րդ ծորակի դիրքերը՝

-  Գազաբալոնից գազի բաց թողնելը
-  Գազաբալոնն իներտ գազով լցավորելը

1-գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցի վրայի գազաբալոնը, 2, 9-գազաբալոնային փական, 3-գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցի գազաբալոնի վրայի ճնշաչափ, 4-ղեկավարման ծորակ, 5-գազի բացթողման «մոմային» խողովակ, 6-աղմուկի խլացուցիչ, 7-փակող փական, 8-բարձր ճնշման ռեդուկտոր, 10-իններտ գազի գազաբալոն




Գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման տեղամաս

I-գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման կետ

II - գազաբալունային սարքավորումների նորոգման և կարգավորման արտադրամաս

1-շարժիչ-փորձասարք, 2-դարակաշար՝ գազաբալունային սարքավորումների պահպանման համար, 3-փականագործական դազգահ, 4-շարժական տեղակայանք՝ գազաբալունային սարքավորումների ստուգման և կարգավորման համար, 5-սարքավորումների տակդիր, 6-գազանալիզատոր, 7-գայլիկոնման հաստոց, 8-գրասենյակային սեղան, 9-աղբարկղ, 10-արկղ ավազի համար, 11-կրակմարիչներ, 12-գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցներ, 13-սայլակ՝ գազաբալունների փոխադրման համար, 14-փականագործ-նորոգողի շարժական կետ, 15- գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցի ամբարձիչ



Կազմակերպությունում զագաբալոնային սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման արտադրամասի օրինակելի հատակագիծ

Պ- հարկադրական օդափոխություն

Ջ – ջրի մոտեցումը

* - ուժային էլ. էներգիայի մոտեցումը

- սեղմված օդի մոտեցումը

1-ընդունման սեղան, 2-դարակաշար, 3-արտաքին լվացատեղ, 4-դարակաշար՝ մաքուր սարքերի համար, 5-սրբող նյութերով արկղ, 6-շրջասրոց, 7-գայլիկոնման հաստոց, 8-լվացատեղ՝ դետալների համար, 9-կետ՝ բարձր ճնշման ռեդուկտորի ընթացիկ նորոգման համար, 10-կետ՝ ցածր ճնշման ռեդուկտորի ընթացիկ նորոգման համար, 11-կետ՝ կարբյուրատոր-խառնիչի ընթացիկ նորոգման համար, 12-ճնշակային տեղակայանք, 13-օդամբար՝ սեղմված գազի համար, 14-ստենդ՝ զագային սարքերի ստուգման և կարգավորման համար, 15-պատրաստի արտադրանքի դարակաշար, 16-սեղան՝ փաստաթղթերի պահման համար, 17-լվացարան, 18-ավազով արկղ, 19-արկղ՝ աղբի համար:

Հավելված N 3
22 կառավարության 2005 թվականի
սեպտեմբերի 28-ի N 2388-Ն որոշման

ԲԱԼՈՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ԵՎ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱԶԱՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ՄՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃՆՇԱՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱՆԵՐԻՆ ԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒ ԻՆՏԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

1. Բալոնների պարբերական վկայագրման ու զագաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների զագավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկման աշխատանքներ կատարող կազմակերպությունների (այսուհետ՝ վկայագրող կազմակերպություններ) արտադրական բազաները պետք է բաղկացած լինեն հետևյալ տեղամասերից՝

1) բալոնների պարբերական վկայագրման տեղամաս՝ 72,0 քառ. մ և ավելի

մակերեսով.

2) գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վրայից բալոնների հանման-տեղակայման և գազավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկման տեղամաս՝ 72,0 քառ. մ և ավելի մակերեսով.

3) սեղմված օդի կուտակման համակարգով ճնշակային տեղամաս՝ 24,0 քառ. մ և ավելի մակերեսով:

2. Վկայագրող կազմակերպությունների արտադրական տեղամասերի բարձրությունը մինչև դուրս ցցված շինարարական կոնստրուկցիաների ներքևի մասը պետք է լինի.

1) բալոնների պարբերական վկայագրման տեղամաս՝ 4,2 մ-ից ոչ պակաս.

2) գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վրայից բալոնների հանման-տեղադրման և գազավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկման տեղամաս՝ 5,0 մ-ից ոչ պակաս.

3) սեղմված օդի կուտակման համակարգով ճնշակային տեղամաս՝ 3,0 մ-ից ոչ պակաս:

3. Վկայագրող կազմակերպությունների արտադրական բազաները պետք է հագեցված լինեն համապատասխան սարքավորումներով, արտադրական գույքով և հատուկ գործիքներով՝ համաձայն սարքավորումների և գույքի օրինակելի ցանկի:

4. Վկայագրող կազմակերպություններն ստեղծվում են ինչպես նորակառույց, այնպես էլ գործող կազմակերպության գոյություն ունեցող արտադրական մասնաշենքերում:

5. Վկայագրող կազմակերպությունների արտադրական մասնաշենքի ընտրության դեպքում դրա դասավորվածությունը պետք է լինի այնպես, որ մի կողմից հասանելի լինի առավել բնական լուսավորությունը (լուսամուտային բացվածքների առկայություն), իսկ մյուս կողմից՝ ավտոտրանսպորտային միջոցների մուտք ու ելքի համար մոտենա երթևեկելի գոտի:

6. Վկայագրող կազմակերպությունների գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վրայից գազաբալոնների հանման-տեղակայման և գազավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկման տեղամասը պետք է կահավորված լինի նաև սեղմված բնական գազի բացթողման և գազաբալոնների գազազերծման կետերով:

7. Վկայագրող կազմակերպությունների տեղամասերի մակերեսների վրա հիմնական տեխնոլոգիական սարքավորումները պետք է տեղաբաշխվեն այնպես, որպեսզի ապահովեն աշխատանքների կատարման տեխնոլոգիական հաջորդականությունը:

8. Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների կտուրին տեղակայված գազաբալոնների փականապահովչային արմատուրայի և գազային խողովակաշարի միացությունների հերմետիկության ստուգման համար վկայագրող կազմակերպությունների գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վրայից գազաբալոնների հանման-տեղակայման և գազավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկման տեղամասը պետք է ունենա առավելագույն բարձրությամբ գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների կտուրի մակարդակի տեխնոլոգիական հարթակով անշարժ կամ շարժական սանդուղք:

9. Բացի հիմնական տեխնոլոգիական սարքավորումներից՝ վկայագրող կազմակերպությունները պետք է կահավորված լինեն նաև այլ սարքավորումներով՝

գույք, դարակաշարեր, գործասեղաններ, սայլակներ:

10. Ճնշակային տեղամասը տեղաբաշխվում է առանձին (մեկուսացված) շինությունում և իր մեջ ներառում է ճնշակային տեղակայանք և սեղմված օդի կուտակիչ ու օժանդակ սարքավորում (օպերատորի աշխատավայր, ստուգիչ-չափիչ սարքեր և այլն):

11. Վկայագրող կազմակերպությունների տեղամասերի արհեստական ընդհանուր լուսավորությունը պետք է ապահովի ոչ պակաս լուսավորություն՝ 200 լք լյումինեսցենտային լուսավորության դեպքում և ոչ պակաս 150 լք՝ շիկացման լամպերի դեպքում:

12. Վկայագրող կազմակերպությունների շինություններում պետք է ապահովվեն Հայաստանի Հանրապետությունում գործող արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմերի պահանջները:

13. Վկայագրող կազմակերպությունների արտադրական բազաների կազմի մեջ մտնող բոլոր շինությունները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

հրդեհային անվտանգության նորմերի ու կանոնների պահանջներին:

14. Վկայագրող կազմակերպությունների արտադրական տեղամասերը պետք է ապահովված լինեն տեխնոլոգիական սարքավորումների գործելու համար երկու պարամետրով սեղմված օդի մատակարարմամբ՝

1) ցածր ճնշման՝ 0,4-0,6 ՄՊա.

2) բարձր ճնշման՝ 20,0-22,0 ՄՊա:

15. Բարձր ճնշման սեղմված օդի մատակարարումն իրականացվում է ճնշակային տեղակայանքից սեղմված օդի՝ 500 լ-ից ոչ պակաս ծավալով կուտակիչի միջոցով:

16. Որպես բարձր ճնշման սեղմված օդի կուտակիչ՝ կարող են օգտագործվել նաև շրջանակ-տակդիրի վրա մոնտաժված և պատին ամրացված սեղմված բնական գազի համար նախատեսված բալոնները: Բալոնների փականները պետք է պողպատե խողովակներով միացված լինեն հաջորդաբար, որոնցից մեկին միացվում է ճնշակի ելքային խողովակը, իսկ վերջինից դեպի սպառողը (անմիջականորեն կամ օժանդակ սարքի միջոցով):

17. Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի բալոնների պարբերական վկայագրման և ճնշափորձարկման աշխատանքներ (այսուհետ՝ վկայագրման աշխատանքներ) կատարող բանվորական և ինժեներատեխնիկական անձնակազմերը պետք է իմանան Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 2388-Ն որոշման N 1 հավելվածի պահանջները, ինչպես նաև՝

1) ավտոտրանսպորտային միջոցների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները.

2) ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոնների պարբերական վկայագրման տեխնոլոգիան.

3) գազաբալոնների պարբերական վկայագրման և ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման աշխատանքներում կիրառվող տեխնոլոգիական սարքավորումների, սարքերի, հարմարանքների ու

գործիքների շահագործման հրահանգները.

4) ավտոփականագործության հիմունքները.

5) ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղակայվող գազաբալոնային սարքավորումների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները.

6) գազաբալոնային սարքավորումների հնարավոր անսարքությունները, առաջացման պատճառները, բացահայտման և վերացման եղանակները.

7) տեխնիկայի անվտանգության կանոնները՝ գազաբալոնների պարբերական վկայագրման և ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման աշխատանքների կատարման ընթացքում.

8) գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի նշանակությունը, աշխատանքի սկզբունքները և ճնշափորձարկումների եղանակները.

9) տեխնիկայի անվտանգության կանոնները՝ գազաբալոնների պարբերական վկայագրման և ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման աշխատանքների կատարման ընթացքում:

18. Ինժեներատեխնիկական անձնակազմերը և կազմակերպությունների ղեկավարները լրացուցիչ պետք է իմանան նաև Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական և նորմատիվատեխնիկական ակտերի, ոլորտին վերաբերող կանոնակարգերի, ստանդարտների ու հակահրդեհային նորմերի պահանջները:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան

Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Ց Ա Ն Կ

ԳԱԶԱԲԱԼՈՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ԵՎ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱԶԱՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ՄՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՃՆՇԱՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Տեխնոլոգիական սարքավորման անվանումը	Չափման միավորը	Նվազա- գույն քանակը
Ա. Գազաբալոնների վկայագրման տեղամաս			
1.	Բալոնների հիդրավլիկ փորձարկման կայանք	հատ	1
2.	Բալոնների փականների ու անցումային կցիչների ապամոնտաժման ու մոնտաժման կայանք	հատ	2
3.	Բալոնների ներքին մակերևույթի մաքրման կայանք	հատ	1
4.	Բալոնի ակուստիկ-առաքման հսկողության սարք (միայն 4-րդ	հատ	1

	տիպի բաղնենների վկայագրում կատարող կազմակերպություններում)		
5.	Ուլտրաձայնային հաստաչափ	հատ	1
6.	Կշեռք	հատ	1
7.	Բաղնենների ու դրանց արմատուրանների օդաճնշակային փորձարկման կայանք և կուտակիչ	հատ	1
8.	Բաղնենների չորացման հարմարանք	հատ	1
9.	Բաղնը տեղափոխելու բռնիչ	հատ	1
10.	Բաղնը տեղափոխելու սայլակ	հատ	1
11.	Ներկած բաղնենների չորացման կայանք	հատ	1
12.	Լապտեր` 12Վ լարման	հատ	1
13.	Փականագործական գործիքների հավաքածու	հատ	1
Բ. Գազաբաղնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգի ճնշափորձարկման տեղամաս			
1.	Ավագով արկղ	հատ	1
2.	Սրբելու (մաքրելու) լաթերով արկղ	հատ	1
3.	Ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգի ագրեգատների և հանգույցների լվացման տեղակայանք	հատ	1
4.	Գազամուղների և գազավառելիքային սարքավորումների ընթացիկ նորոգման տեղակայանք	հատ	1
5.	Գազավառելիքային սարքավորումների ստուգման և կարգավորման տեղակայանք	հատ	1
6.	Գործիքապահոց կողասեղան` հատուկ գործիքների համար	հատ	1
7.	Դարակաշար	հատ	3
8.	Սեղմված օդի կուտակիչ	հատ	1
9.	Ճնշակային տեղակայանք	հատ	1
10.	Վակուումային տեղակայանք	հատ	1

(Հավելվածը լրաց 20.11.08 N 1407-Ն, 21.01.10 N 53-Ն)